
ԱՐՄԷՆ ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆ

ՆՈՐ ՁՈՒՂԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ





ՀՏԴ 72:94(479.25)
ԳՄԴ 85.11+63.3(5Հ)
Հ 165

Հ 165 Հախնազարեան Արմէն
Նոր Ջուղայի եկեղեցիների ճարտարապետութիւնը /Ա. Հախնազարեան.-Եր.: ՀՃՈՒ հիմնադրամ,2026.-96 էջ:

Նոր Ջուղայի հոգևոր կառույցների դաշտային հետազոտությունները, գրադարանային ուսումնասիրությունները և դրանց արդյունքների ամփոփումն Արմեն Հախնազարյանը կատարել է 1980-ական թվականներին: Այնուհետև՝ 1991 թ., այն մասամբ հրատարակվել է Վենետիկում անգլերենով-իտալերենով “Documents of Armenian Architecture” մատենաշարի “Nor-Djulfa” հատորում (vol. 21): Սույն հրատարակությունը ՀՃՈՒ հիմնադրամի արխիվում պահվող մեքենագիր աշխատության ամբողջական տարբերակն է:

Աշխատությունը նվիրվում է ՀՃՈՒ կազմակերպության հիմնադիր-նախագահ, հայկական պատմական հուշարձանների ուսումնասիրության և պահպանության գործի առաքյալ, ճարտարապետության դոկտոր երջանկահիշատակ Արմեն Հախնազարյանի ծննդյան (1941 Թեհրան-2009 Աախեն) 85-ամյակին:





ՀՏԴ 72:94(479.25)
ԳՄԴ 85.11+63.3(5Հ)

ISBN 978-9939-843-74-2

© ՀՃՈՒ հիմնադրամ, 2026

ԵՐԵՎԱՆ - 2026

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԺԵ-ԺԷ ԴԱՐԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԳԵՐԵՎԱՐՈՒԹԵԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ

ԺԵ-ԺԶ դարերում Մերձաւոր Արեւելքում գոյանում են 2 տիրապետող ուժեր. մէկը՝ Օսմանեան սուլթանութիւնը, միւսը՝ Սեֆեւեան Պարսկաստանը:

Օսմանեան պետութիւնը, գրաւելով Բալկանեան երկրները եւ Բիւզանդական կայսրութեանը պարտութեան մատնելով, մօտեցել էր Հայաստանի սահմաններին. միւս կողմից նորակազմ Սեֆեւեան պետութեան սահմաններում էր գտնւում Հայաստանը՝ կորցրած լինելով իր պետականութիւնը: Այսպիսով, երկու հզօր պետութիւնները սահմանակից են դառնում, նրանց բաժանող գիծը համարւում է Եփրատ գետը՝ Հայաստանի արեւմտեան սահմանը:

Այնուհետեւ Հայաստանը դառնում է պատերազմական թատերաբեմ եւ մեծապէս տուժում 2 պետութիւնների ընդհարումներից՝ սկսեալ 1514 թւականից, ուր մերթ Պարսկաստանի եւ մերթ Թուրքիայի դրօշն է բարձրացւում:

1578 թւականին թուրքերը կրկին գրաւում են Հայաստանը, Վրաստանը եւ Ատրպատականը:

Ամբողջ ԺԶ դարը եղաւ հայ ժողովրդի քայքայման ու ջլատման շրջան, ուր ժողովուրդը մեծ կորուստներ ունեցաւ շարունակ պատերազմների ընթացքում եւ ապրեց սովի ու տագնապի, գերեվարութեան եւ աւերածութեան շրջան: Պարտքը, աղքատութիւնը եւ տեսակ-տեսակ հարկերի ծանրութիւնը ժողովրդին մատնել էին դժւար պայմանների: Հարստահարութիւններից զերծ չմնաց նաեւ Ս. Էջմիածնի աթոռը:

Ստեղծւած ծանր պայմանների կողքին թուրքերը աւելացնում են մի այլ չարիք եւս: Սուլթան Սուլէյման Առաջինը (1520-1566) ենիչերական բանակը զօրացնելու համար հրամայում է 2-5 տարեկան քրիստոնեայ արու զաւակներին հաւաքել եւ զինւորական գործերին վարժեցնել, որպէսզի յետագայում ծառայեցնի իր նպատակների համար: Այս չարիքից ձերբազատւելու նպատակով ժողովրդի մի մասը ձգտում է հեռանալ Հայրենիքից, սակայն մեծ մասը, որ մնում էր հողին կառչած, փորձում է ելք գտնել այդ պայմաններից ազատւելու համար: Ուստի Հայոց կաթողիկոս Ստեփանոս Սալմաստեցու միջոցով 1547-ին Էջմիածնում գումարւում է գաղտնի ժողով, ուր եւ որոշւում է կաթողիկոսի գլխաւորութեամբ դիմում ուղարկել Վենետիկի Հանրապետութեանը:

Պատւիրակութիւնը մեկնում է Եւրոպա՝ Վենետիկ, Հռոմ, Գերմանիա, Լեհաստան, սակայն առանց արդիւնքի վերադառնում է Էջմիածին 1551 թւին:

1562 թւականին Միքայէլ Սեբաստացու գլխաւորութեամբ նոյն կազմով մի ժողով գումարւում է Սեբաստիայում: Այս անգամ հայերի պատւիրակութիւնը, գլուխ ունենալով Աբգար Եւդոկացուն, մեկնում է Հռոմ՝ դիմելով Հռոմի Պապին, սակայն պատւիրակութեանը դարձեալ չի յաջողւում նոյնիսկ որեւէ օգնութեան խոստում ստանալ:

Յետագայում ծանր հարւածներից խոյս տալու համար Մելիքսեդեկ կաթողիկոսը, Հաւուց Թառի Մանուէլ եպիսկոպոսը եւ Գեղարդի Աստւածատուր եպիսկոպոսը, բազմաթիւ մելիքներ՝ Սարուխան բէգը եւ եղբայրը՝ Նազարը՝ Ոսկանաբադ գիւղից, Օղլան քահանան եւ եղբայրը՝ Ղալաբէգը՝ Հաթերք գիւղից, Ջալալ բէգը եղբօր որդիներով՝ Խաչենայ գիւղից, Մելիք Սուջումը՝ Դիզակից, Մելիք Փաշիկը՝ Քօչիզից, Մելիք Բաբէն՝ Բրետիս գիւղից, Մելիք Հայկազը՝ Խանածախ գիւղից, իրենց գերդաստաններով գաղթում են Պարսկաստան: Դիմելով Շահ Աբաս Ա-ի օգնութեանը՝ բնակեցւում են Սպահանում[1]:

Միւս կողմից Թուրքիայի արեւելեան նահանգները ապրում էին խռովայոյզ ժամանակաշրջան. սկսւել էր գիւղացիական ապստամբութիւնը, եւ ծայր էին առել դժգոհութիւնները:

Այս դէպքերը պատեհ առիթ դարձան շահին յարձակւելու Հայաստանի վրայ եւ վրէժ լուծելու իր նախնիների հողային կորուստների, որը վաղուց ի վեր փայփայում էր:

1603-ին Շահ Աբասը մեծ բանակով մտնում է Հայաստան: Ճանապարհին օթեւանում է Ջուղայում, ուր ընդառաջում են արքայավայել: Հայերը գետի ափից մինչեւ խօջայ Խաչիկի ապարանքը թագաւորի ոտքերի տակ փռում են պատւական կերպասներ եւ գորգեր: Իշխաններ, ծերեր եւ երիտասարդներ՝ զարդարւած եւ գեղեցիկ հագուստներով, քահանաների երգեցիկ շքախմբով, վառած մոմերով եւ խնկով դիմաւորում են նրան: Պատանիները ոսկեայ բաժակներով անուշահամ եւ լաւորակ գինի են մատուցանում: Խօջա Խաչիկի բնակարանը հասնելով՝ պարսից շահին մեծ մատուցարանով տրւում է լեցուն ոսկէ եւ թանկագին քարերով զարդեղէն: Նոյն ոճով նա պարգեւատրում է այլ մեծամեծների միջոցով:

Շահը այդ ընթացքում գնդեր է ուղարկում Հայաստանի զանազան շրջաններ, ինչպէս՝ Արծկէ, Արճէշ, Կարին կամ Էրզ-

---

1 Պատմութիւն **Առաքել վարդապետ Դաւրիժեցւոյ** (այսուհետ՝ **Առաքել Դաւրիժեցի**, համապատասխան էջերով), Վաղարշապատ, 1896, էջ 16-17: Տե՛ս նաեւ **Չամչեանց Մ.**, Պատմութիւն Հայոց, հ. Գ., Վենետիկ, 1786, էջ 533-538:

րում, Բերկրի, Վան, Ալաշկերտ, Կարս, Կաղզուան, Մանազկերտ, Խնուս, Բասեն, Գանձակ եւ Սեւանայ լճի շրջակայքը: Պարսիկ բանակը հրոյ ճարակ է դարձնում բնակավայրերը եւ թալանում ամէն ինչ: Ի վերջոյ տասնեակ հազար բազմութիւն հաւաքում, բերում են Արարատեան դաշտ:

Ժողովրդի մեծ մասը, չուզելով ենթարկուել գերութեան, բարձունքներից իրեն ցած է գլորում եւ ջախջախւում: Ժխորի մէջ ոտնակոխ են լինում թոյլերը, դիմադրողները սպանւում են զինուորների սրերով...

Պարսից թագաւորի յաջողութեան լուրը տարածւում է ամեն կողմ: Հայաստանում գտնւող օսմանեան բանակը ապաստան է գտնում Երեւանի բերդում: Պարսիկները 7 ամիս շրջապատում են բերդը:

Այս ընթացքում յաղթական շահը իր մօտ է կանչում Դաւիթ եւ Մելիքսեդեկ կաթողիկոսներին եւ նրանցից պահանջում թուրքերին վճարելիք պարտքի կրկնապատիկը: Յուսախաբ ժողովուրդը, ճարահատւած օտարներից փոխ առնելով, վճարում է պարտքը:

Այս դէպքերից յետոյ պարսիկները նւաճում են Երեւանի բերդը՝ 1604-ին կոտորելով օսմ. բանակի մեծ մասը, եւ ոմանք էլ մտնում են պարսից շահի ծառայութեան ներքոյ:

Շահ Աբասի յաղթութեան լուրը հասնում է Կոնստանտինուպոլիս: Թուրքերը մի մեծ բանակ են կազմում Սինան փաշայի գլխաւորութեամբ եւ որոշում գրոհել Հայաստանի՝ Շահ Աբասի բանակի վրայ: Սակայն շահը տեղեկանալով որոշում է նահանջել իր սահմանները՝ սպասելով մինչեւ մի այլ պատեհ առիթի:

Այս ընթացքում բացւում է Հայոց պատմութեան դառնագոյն էջերից մէկը պարսից շահի դժոխային մտայղացումով. այն է՝ դատարկել Հայաստանը բնակիչներից եւ գաղթեցնել իր պետութեան սահմանները: Այսպիսով, Սեֆեւեան շահը շարունակում է Սասանեան դինաստիայի քաղաքականութիւնը: Շահի այս ազգակործան մտադրութիւնը հետապնդում է հետեւեալ նպատակները.

Ա – Երբ թրքական բանակը Հայաստան հասնէր, ամայութեան պատճառով պաշարի պակասի դիմաց պիտի կանգնէր: Սա կլիներ Շահ Աբասի ռազմաստրատեգիական յաղթանակը:

Բ – Բռնագաղթով կը թուլանար Պարսկաստանի սահմանակից հիւսիսային եւ հիւսիսարեւմտեան շրջանը: Սա գործի քաղաքական յաղթանակը պիտի համարւի:

Գ – Տնտեսական տեսակետից կը բազմանար իր պետութեան բնակչութեան եւ հարկատուների թիւը, կը զարգանային արհեստը, առեւտուրը եւ հողագործութիւնը հայ առեւտրականների, արհեստաւորների եւ հողագործների միջոցով, որոնք հմուտ էին իրենց գործում:

Այսպիսով, շահը արձակում է հրամանը: Բանակը, մոռանալով մարդկային գութը, սկսում է անցկացնել գետը Արարատեան դաշտում հաւաքւած ժողովրդին՝ պատմութեան մէջ յայտնի «Գլխաւոր գերեվարութեան» զոհերին, ըստ Առաքել պատմիչի՝ «...բռնութեամբ վարեալ՝ ածեալ բերեալ հասուցին ի գաւառն Արարատու, եւ զլայնանիստ դաշտն նորա լցին ծագէ ի ծագ. քանզի ի ստորոտէ լերանցն Գառնւոյ մինչ ի յեզրն Երասխայ մեծի գետոյն, լայնութիւն էր բանակին. իսկ զերկայնութիւնն դովիմբ կշռեաց դու, բայց ես ասեմ աւուր միոյ ճանապարհ եւ յայլուր տեսի՝ որ հինգ աւուր ճանապարհ էին գրեալ»[2]:

Տասնեակ մակոյկներ բաւական չէին ժողովրդին փոխադրելու գետի միւս ափը, ուստի նրանց ուժով թափում են գետը: Խուճապի մատնւած ժողովրդին վախեցնելու համար գլխատում են Առաքել կաթողիկոսի եղբօրը՝ Յովհաննէսին, մի քանի այլ աչքառու դէմքերի, որոնց գլուխները մխում են ձողերի վրայ եւ դնում գետի եզերքին՝ առ ի տես բոլորին:

Բազմապիսի չարչարանքներից յետոյ ժողովրդի մեծ մասը անցնում է գետը՝ հարազատներից շատերին թողնելով Արաքսի ալիքների մէջ:

Ահա ընդհանրական գերեվարութեան զոհերը, անցնելով դժւարանցանելի լեռներով, հասնում են Թարում, ապա Խալխալ, Ահար եւ հասնելով Մուշկան՝ իրաւունք են ստանում ձմեռելու: Այս ստւար բազմութիւնից շատերը եւս ճանապարհին զոհւում են ցրտից, քաղցից, համաճարակներից:

Սոյն զանգւածը գարնան հասնելուն պէս փոխադրւում է երկրի խորքերը, ինչպէս՝ Ղազւին, Գիլան-Էնզելի, Փահլաւի, Դարբանդ, Քաշան ու Սպահան:

Նշելի է, որ բռնագաղթը կատարել է մի քանի հանգրւաններով, ինչպէս ընդհանրական գաղթից առաջ բռնի գաղթեցրել է Արծկէի եւ իր շրջանի ժողովուրդը՝ թւով 23.000[3]:

Մեծ տարագրութիւնից քանի օր յետոյ շահը հրաման է արձակում գաղթեցնել Ջուղայի բնակչութեանը:

Ջուղայի եւ շրջանի յուսախաբ ժողովրդին 3 օր ժամանակ է տրւում պատրաստւելու գաղթի համար:

Մի հատւածը, դիմադրութիւն ցոյց տալով, փախչում է շրջակայ լեռները, որպէսզի արհաւիրքից յետոյ կարող լինի վերադառնալ իր բնօրրանը:

Բռնագաղթի ենթարկւած ջուղայեցիք վերցնում են իրենց ունեցւածքի մէկ մասը, միւս մասը թաքցնում են այն յոյսով, որ պիտի վերադառնան եւ տիրանան իրենց գոյքերին, իսկ ժողովրդի սեփհականութեան կարեւոր մասը կողոպտւում է գերեվարողների կողմից:

---

2 **Առաքել Դաւրիժեցի**, էջ 40:

3 Նշ. աշխ., էջ 33:

Հայրենիքին հրաժեշտ տալու օրը տարեց, մանուկ, կին ու տղամարդ ողբում են, քահանաները վերցնում են տների, եկեղեցիների բանալիները եւ Արաքս հասնելով՝ նետում գետի մէջ:

Ջուղայեցիները տարւում են Թաւրիզ, Ղազւին եւ ապա Սպահան:

Երբ Ջուղայի տարագրւած ժողովուրդը գտնւում էր Թաւրիզում, շահին տեղեկացնում են, թէ որոշ քանակով հայեր դեռ մնում են Ջուղայում:

Շահը ձմեռն անցնելուց յետոյ Թահմազղուլի խանին գործուղում է գաղթեցնելու Ջուղայում մնացածներին եւ աւերելու ու այրելու Ջուղան, որպէսզի գաղթականները երբեւիցէ չերազեն վերադառնալ իրենց Հայրենիքը: Կատարւում է հրամանը. գերւած ժողովուրդը բերւում եւ միացւում է արդէն իսկ Ղազւին հասած բռնագաղթւածներին, այնուհետեւ տարւում Սպահան:

Ջանազան հանգրւաններով Սպահան բերւած ժողովուրդը բնակւում է Սպահանի քաղաքամիջում:

1605-ին սկսւում է Նոր Ջուղայի հիմնադրութիւնը Զայենդէռուդ գետի հարաւային ափերում ընկած հողամասերի վրայ, եւ ի յիշատակ իրենց հայրենի աւանի՝ նորակառոյց աւանը կոչւում է Նոր Ջուղա:

Սպահանի քաղաքամիջում՝ Զայենդէռուդ գետի հիւսիսային մասում, շարունակում են ապրել քաղաքացի գաղթականները՝ երեւանցիները եւ գասկեցիք՝ Թորոսկան թաղում, որը մօտ է Նարնդալէին, թաւրիզեցիք եւ դաշտեցիք՝ Շամսաբադի մէջ, ոմանք էլ՝ Փաղալայի մէջ, իսկ մի մասն էլ՝ քաղաքի զանազան թաղերում՝ Խօրասկանում եւ Շխսաբանի մէջ[4]:

Հողագործ գաղթականները բնակեցւում են Սպահան քաղաքի գաւառներում՝ Լնջանում, Ալինջանում, Գանդիմանում, Ջղախօռում, Փերիայում եւ Բուրւարիում: Իւրաքանչիւրը բաղկացած է բազմաթիւ գիւղերից[5]:

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Շահ Աբասը ջուղայեցիներին Սպահան է հասցնում 1605 թւին: Նրանք մէկ տարի յետոյ ձեռնարկում են Նոր Ջուղայի հիմնարկութիւնը շահի կողմից ւնիրւած եւ մի մասն էլ արծաթով գնւած ընդարձակ հողամասի վրայ, որը գտնւում է Զայենդէռուդ գետի հարաւային ափին[6]:

Նոր Ջուղայի յատակագիծը գծւում է ըստ իրենց ցանկութեան, քանի որ այն կատարւում էր մի ընդարձակ դաշտի վրայ, ուր նախապէս շինութիւններ չեն եղել:

Ջուղայեցիք մի ընդարձակ պողոտայ են գծում՝ 3276 քայլ երկարութեամբ եւ 16 քայլ լայնութեամբ, արեւելքից արեւմուտք, զուգահեռ գետին, նրանից կէս կմ հեռու եւ Ջուղայի մեծ եւ առաջին իշխանապետի՝ խօջայ Նազարի անունով այն կոչում Նազարի պողոտայ: Այն նոյն անունով դեռ գոյութիւն ունի: Պողոտայի արեւմտեան ծայրամասում ազնւական Սաֆրազեանները, որոնք լուսաւորչական էին, կառուցում են իրենց բնակարանը եւ կոչում Սաֆրազեան դուռ:

Կաթոլիկ հայ ազնւական Շահրիմանեանները իրենց բնակարանը կառուցում են արեւելեան կողմում: Նրանց անունով այն կոչւում է Շահրիմանենց դուռ:

Նազարի պողոտան յատող 10 զուգահեռ փողոցներ գծւում են Զայենդէռուդի աջ ափից սկսեալ եւ ըստ ոմանց՝ շարունակւում մինչեւ հայոց գերեզմանատան մօտ[7]:

Ջուղայեցիք 10 փողոցների միջեւ ընկած հողամասերի վրայ կառուցում են իրենց բնակարանները եւ իւրաքանչիւրը կոչում *տասնեակ*, իսկ իւրաքանչիւր *տասնեակ* կրում է բնակիչներից ամենանշանաւորի անունը:

Չեռք բերւած *տասնեակների* անունները հետեւեալներն են.

1 Դիլաքեանց	2 Մեծ Խօջէնց	3 Փիրմսենց
4 Գիլանէնց	5 Բաղրամէնց	6 Աւագենց
7 Միրմանեանց	8 Չէքեանց	9 Իսրայէլենց
10 Փանոսեանց	11 Թօփչեանց	12 Ջախաքունենց
13 Ղօչղարեանց	14 Թաղվալեանց	15 Աղիջանենց
16 Տէր Անանեանց	17 Մուշեղեանց	18 Ղարադաղեանց
19 Աւագ Էդանեանց	20 Դաւթենց[8]	

4 **Տէր Յովհաննեանց Յ.**, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. Ա, Նոր Ջուղա, 1880, էջ 33:

5 Ա. Ալինջան գաւառը՝ Սպահանից 30 կմ տարածութիւնով, ունեցել է հետեւեալ 7 գիւղերը՝ Մշաղբուր, Փիդուն, Զազռան, Քափաշան, Բօնդարդ, Քուրուջ, Մէմէդ:
Բ. Լնջան գաւառը Սպահանից 30 կմ տարածութիւնով ունեցել է 10 գիւղեր՝ Փարթուն, Ջուդուն, Ջուզուն, Քիլիսուն, Փէլարդ, Բուրուզարդ, Սէմսուն, Խունսարէք, Միրգիւն եւ Քեալէ:
Գ. Գանդիման եւ Ջղախօռ գաւառը՝ Սպահանի հարաւում, ունեցել են հետեւեալ գիւղերը՝ Սիրաք, Ամադաբաղ, Գիշնիգան, Մամուռան եւ Լիվասիան:
Դ. Փերիա գաւառը՝ Սպահանի արեւմտեան կողմը 120 կմ հեռաւորութեան վրայ, ունեցել է Խօջիղալա, Հազարջարիբ, Բոլորան, Ազնաւուլ, Հադան, Նամակերտ, Դրախտակ, Միլակերտ, Շուրիշկան, Բժկերտ, Խունկ, Սանգիբարան, Խօյգան, Դաջան, Ղարդուն, Սւարան, Մուղան, Ատիգեան, Նանադիկեան, Դարաբուրգ, Քրդեր գիւղերը:
Ե. Բուրւարի գաւառը՝ Փերիա գաւառից 70 կմ տարածութեան վրայ, գտնւում է վերջինիս հիւսիս-արեւմուտքում, ունեցել է հետեւեալ գիւղերը՝ Չամխսու, Ջաջուն, Չէշմէփառա, Քաւարզայ, Անաւշ, Չարբաղ, Ջղագուրկ, Բօղքօք, Ղասումաւայ, Ջանխօշ, Փարմիշան, Շաւրաւա, Թարքու, Փառչիս, Փահրա, Խօսրովաբադ, Դէյնով, Գուլբահար, Հմայա, Մէվրստան եւ Աղգոլ (նշ. աշխ., էջ 32-33):

6 Նշ. աշխ., էջ 36-37, 41:

7 Նշ. աշխ., էջ 39:

8 Նշ. աշխ., էջ 40:

Սոյն *տասնեակներում* հայերը գեղեցկօրէն կառուցում են իրենց բնակարաններն ընդհանրապէս երկյարկանի՝ բակի խորքում եւ սենեակի պատերը զարդարում գեղեցիկ որմնանկարներով:

Մեծ Մէյդան, Փոքր Մէյդան, Յակոբջանենց եւ Չարսու թաղերը (յիշեալները յետագայ բաժանումների անուններ են) ունեցել են որմնանկարներով պալատակերպ կառոյցներ: Մի քանիսը այժմ դեռ գոյութիւն ունեն, եւ Դաւրէժ եւ Մեծ Մէյդան թաղերում գտնուող այս բնակարանները գնել են եւ պահպանում են «Մշակութային ժառանգութեան պահպանում» կազմակերպութեան միջոցով, որոնք շուտով[9] պիտի թանգարանի վերածեն:

ԺԷ դարի երկրորդ կէսին, երբ Շահ Աբաս Բ-ն խստիւ արգելում է գինու պատրաստումը եւ վաճառքը, որը մեծ մասամբ կատարւում էր հայերի միջոցով, սակայն հարբեցողութիւնը, ծանր արգելումով հանդերձ, չէր պակասում, որոշւում է Սպահանի քաղաքամիջից տեղահանել հայերին, եւ 1650 թիւն դաշտեցիք եւ թաւրիզեցիք դուրս են գալիս Շամսաբադից եւ Նոր Ջուղային կից կառուցում են իրենց բնակավայրը՝ Դաւրէժ եւ Դաշտեցոց նոր թաղամասերը[10]:

Երեւանցիները եւ Շխսաբայի ու քաղաքամիջի այլ հայեր, դժւար յօժարւելով, վերջապէս լքում են քաղաքամիջի իրենց բնակարանները եւ եկեղեցիները եւ Նոր Ջուղային կից կառուցում Գազք, Մարնուն, Քոչեր եւ Երեւան նոր թաղամասերը՝ իրենց եկեղեցիներով, բնակարաններով եւ պարտէզներով[11]:

Ս. ԱՍԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԸ

Շահ Աբասի բռնագաղթից տեղահանւած հայերը նախ հաստատւում են Իսֆահան քաղաքում եւ նոյն ժամանակ, այսինքն՝ 1606 թիւն, Զայենդէռուդ գետի միւս ափին ժողովրդի հետ գաղթած հոգեւորականութեան համար Հին Ջուղայում ունեցած վանքի անունով կառուցում Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքը՝ բաղկացած փոքր եկեղեցուց, առաջնորդարանի շէնքից եւ խցերից:

Իսֆահանի հայերը, աստիճանաբար թողնելով քաղաքը, փոխադրւում են գետի միւս ափը եւ բնակութիւն հաստատում վանքի շրջապատում՝ կերտելով Նոր Ջուղա քաղաքը:

Սոյն վանքի կառուցումից 50 տարի յետոյ ջուղայեցիք Դաւիթ Ա առաջնորդի յորդորանքով եւ վերակացութեամբ եւ բարերարների օժանդակութեամբ քանդում են այն եւ ընդարձակելով յատակագիծը՝ մեծ ծախսարարութեամբ կառուցում ներկայ փառաւոր վանքը՝ բարձրաշէն գմբէթով:

Այս աշխատանքը ձեռնարկւում է 1655-ին եւ տեւելով 9 տարի՝ աւարտւում 1664 թիւն[12]:

Վանքը գտնւում է Մեծ Մէյդան թաղում: Հարաւային եւ արեւմտեան կողմերը փողոցներ են, իսկ միւս 2 կողմերը՝ բնակարաններ: Արեւմուտքում Նազարի պողոտայից թեքւող Վանքի փողոցում է գտնւում գլխաւոր մուտքը, իսկ հարաւում՝ դէպի վանք տանող երկրորդական մուտքը:

Հարաւային պարսպի երկարութիւնը չափւում է 122, իսկ արեւմտեան կողմի լայնութիւնը՝ 63 ոտնաչափ[13]:

Սոյն վանքն ունեցել է նաեւ յարակից յարմարութիւններ, ինչպէս՝ առաջնորդարան՝ եկեղեցու դռան դիմաց, եպիսկոպոսանիստ սենեակ, սրահ, միաբանների խցեր, տպարան, մատենադարան, ցորենի շտեմարան, ուղտի ջրաղաց, փայտատուն, հաւատուն, ուղտատուն, յարդանոց, գոմ, նաեւ ջրհոր[14]:

Եկեղեցու բակում գոյութիւն ունեն վանքի առաջնորդներ Աստուածատուրի, Յարութիւնի եւ Յովհաննէս Սուրէնեանի գերեզմանները: Հիւսիսային դռան մուտքի միջեւ գտնւում է վանքի առաջնորդների՝ Դաւիթ Բ-ի եւ Մովսէսի գերեզմանները:

Եկեղեցու արեւմտեան դռան առջեւ գտնւում են Մկրտիչ եւ Կարապետ առաջնորդների եւ մի քանի նշանաւոր աշխարհականների շիրիմներ:

9 Ա. Հախնազարեանը տեղեկութիւնը գրի է առել 1980-ական թթ.:

10 **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., էջ 82:

11 Նշ. աշխ., էջ 82-83:

12 **Տէր Յովհաննեանց Յ.**, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. Բ, Նոր Ջուղա, 1881, էջ 1-2:

13 Նշ. աշխ., հ. Բ, էջ 6:

14 Նշ. աշխ., հ. Բ, էջ 7-9:





Ս. Ամենափրկիչ վանքը հիւսիս-արեւելքից եւ հարաւ-արեւմուտքից (գծանկարը՝ Թէյլօրի, 1881 թ. (արտատպ.՝ Dieulafoy J., La Perse, la Chaldèe et la Susiane, Paris, 1887, p. 263) եւ լուս.՝ անյայտ հեղինակի, Ի դարի սկիզբ)

Խորանի տակ՝ 2 աստիճան ցած, դամբարանն է, ուր գտնւում են առաջնորդներ Խաչատուր Կեսարացու եւ Դաւիթ Ա-ի շիրիմները:

Եկեղեցու ներքին որմերը պատկերազարդուած են տէրունական նկարներով եւ ոսկեզօծ ծաղիկներով, որոնք արուել են Յովհաննէս վարդապետի միջոցով ու խօջայ Աւետիքի ծախսով:

Յատակից մինչեւ 1,65 մ բարձրութեան վրայ յախճասալեր են զետեղուած պատերին:

Գմբէթի թմբուկն ունի 8-ական պատուհաններ եւ պատկերներ, վերջիններս ներկայացնում են՝ ա) Ադամի ստեղծումը, բ) Եւայի ստեղծումը Ադամի կողմից, գ) Ադամի եւ Եւայի ճաշակումը արգելուած պտուղից, դ) տերեւով ծածկելը, ե) արտաքսում դրախտից, զ) Աբէլի մահը, է) նախահայրերի ողբը Աբէլի դիակի վրայ, ը) Կայէնի եւ Աբէլի պատարագը[15]:

Առաջին դասում եւ սրահում գոյութիւն ունեն զանազան խորհրդաւոր նկարներ՝ Լուսաւորչի չարչարանքները, եկեղեցու 7 խորհուրդները, Գաբրիէլի աւետումը, Հրեշտակի՝ Փրկչի ծննդեան աւետումը հովիւներին, Յիսուսի ծնունդը, Մոգերի երկրպագելը, Բեթղեհէմի մանուկների կոտորելը, Սիմէոնի՝ Յիսուսին իր գիրկն առնելը, Յիսուսի նստելը Տաճարում, Յովհաննէսից մկրտուելը, Սատանայի փորձելը Յիսուսին, Փորձութիւնից յետոյ հրեշտակների՝ Յիսուսին պաշտելը, Այլակերպութիւնը, Յիսուսի՝ Երուսաղէմ մտնելը Ծաղկազարդին, Լումայափոխների՝ տաճարից դուրս հանելը, Ոտնլուան, Խորհրդաւոր ընթրիքը, Յիսուսի կալանաւորումը, Յիսուսին քահանայապետի մօտ տանելը, Յիսուսին նախատելը եւ սիւնին կապելը, Պիղատոսի ատեանը, Խաչելութիւնը, Խաչից իջեցնելը, Յիսուսին պատանքելը, Յարութիւնը, Համբարձումը, Ս. Հոգու գալուստը, Աստուածածնի վերափոխումը[16]:

Կան այլ պատկերներ Հին Կտակարանից, վերջին դատաստանից, արքայութիւնից, դժոխքից եւ այլն:

1854-ին եւ 1856-ին նորոգւում են պարիսպները, 1857-ին փոխւում է հին դուռը[17]:

Շուրջ չորս դար իր Մայր երկրից հեռու գործող Ս. Ամենափրկիչ վանքը, ըստ օրւայ պահանջների, շինարարական փոփոխութիւնների եւ նորոգութիւնների է ենթարկւել: Հոգեւոր եւ գիտական ասպարէզում եղել է ուշ միջնադարի մեր կարեւոր օրրաններից մէկը եւ ունեցել իր մշակութային անժխտելի դերը հայոց պատմութեան մէջ:

Վանքի առաջնորդներից մի քանիսն ընտրւել են Ամենայն հայոց կաթողիկոս, իսկ գիտութեան մէջ տւել են հանրածանօթ հոգեւորականներ, ինչպէս՝ Խաչատուր Կեսարացին, որ 1636 թւին հիմքը դրեց Միջին Արեւելքի առաջին տպարանի:

1980-ական թթ. վանքը գտնւում էր Սպահանի եւ Հարաւային Իրանի հայոց թեմական խորհրդի իրաւասութեան ներքոյ եւ հայկական գաղթօջախների կարեւոր կենտրոններից մէկն էր:

Այն բաղկացած է երկու՝ գլխաւոր եւ արեւելեան կամ տնտեսական բակերից:

Գլխաւոր բակում են գտնւում եկեղեցին ու զանգակատունը՝ յարակից բաժիններով, առաջնորդարանը, մատենադարանը, նորակառոյց թանգարանը, իսկ հիւսիս-արեւմուտքում՝ տպարանը:

15 Նշ. աշխ., հ. Բ, էջ 10:

16 Նշ. աշխ., հ. Բ, էջ 11:

17 Նշ. աշխ., հ. Բ, էջ 13:





Խաչատուր Կեսարացու եւ Դաւիթ Առաջինի շիրիմները (լուս.՝ Ս. Դանիէլեանի (ՀՃՈՒ), 2019 թ.), հատուածներ յախճասալէրից (լուս.՝ Ա. Հախնազարեանի (ՀՃՈՒ), 1975 թ.)

Վանքի արեւմտեան դուռը, որպէս գլխաւոր մուտք, շեշտուած է իր մեծութեամբ եւ շքեղութեամբ: Մուտքի 2 կողմերում կան 2-ական քարէ սիւներ, որոնց միջեւ՝ դռան ճակատին՝ յախճասալի վրայ, նկարուած են եկեղեցին ու զանգակատունը, եւ կիսակլոր շրջանակում գեղեցիկ տառերով գրուած է.

Ամենափրկչեան վանք եւ արքեպիսկոպոսարան Հայոց, 1606:

Հրատ. Documents of Armenian Architecture, vol. 21: Nor-Djulfa, Venezia, 1991, p. 104.

Մուտքը բացւում է լայն միջանցքի մէջ, որին 2 կողմերից կից սենեակներն օգտագործւում են որպէս հիւրերի սպասարան: Միջանցքի վերեւում է գտնւում 1931-ին Մարտիրոս Յորդանանեանի կողմից կառուցուած եռայարկ աշտարակը՝ քառակողմ ժամացոյցով, որի զանգի յաճելի ղողանջը հարազատութիւն ներշնչող է:

Միջանցքից 2 աստիճան ցած տարածուն բակն է, որի հարաւում գտնւում են եկեղեցին եւ զանգակատունը՝ իրենց յարակից բաժիններով: Հիւսիսարեւմտեան անկիւնում առանձին մուտքով տպարանն է[18]:

1975 թ. կառուցուած Ապրիլի 24-ի նահատակների յուշարձանը գտնւում է մուտքի մօտ՝ բակի հիւսիս-արեւմուտքում:

1844 թ. իւրայատուկ տեղ է պատրաստւում առաջնորդարանին կից մի սենեակում, եւ Սուրէն Յարութիւնեանի (նախքան վերջինիս առաջնորդ դառնալը) միջոցով համարակալւում են գրչագիր[19] եւ տպագիր գրքերը:

Եկեղեցու հիւսիսում վանքի միաբանութեան խցերը 1905-1906 թւականներին քանդում են եւ Թադէոս Տէր Յովհաննեանի ծախսով կառուցում Մատենադարանի շէնքը, ուր պահւել են ձեռագիր եւ տպագիր գրքերը: Այս շէնքի ճակատին՝ յախճասալի վրայ, գրուած է.

Մ(ուրբ) Ամենափրկչեան Մատենադարան:

Հրատ. Documents of Armenian Architecture, p. 104. **Սինասեան Լ.**, Նոր Ջուղայի եկեղեցիները, Նոր Ջուղա, 1992, էջ 52:

1930-ին Մատենադարանի շէնքը վերածւում է թանգարանի, իսկ գրքերը տեղափոխւում են նախկին առաջնորդարան, ուր մնում են մինչեւ 1971 թ., երբ բակի հիւսիս-արեւելքում կա-

18 1636 թին Խաչատուր Կեսարացու ջանքերով եկեղեցուն կից սենեակներում հիմնադրւել է վանքի տպարանը, իսկ 1638-ին՝ տպագրւել «Սաղմոս Դաւթի» գիրքը: Նշելի է, որ թէ՛ մամուլը եւ թէ՛ թուղթն ու թանաքը պատրաստւել են Կեսարացու եւ իր գործակիցների միջոցով: 1641 թին տպւում է «Վարք Հարանց» գիրքը: Կեսարացին իւր աշակերտ Յովհաննէս վարդապետին ուղարկում է Իտալիա՝ տպագրութեան արուեստը սովորելու: Նա սովորելուց յետոյ իր հետ բերում է մէկ նոր մամուլ 1646 թին, եւ 1647-ին տպւում է «Պարզատումարը» (**Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 18-19): 1844 թին Մանուկ Յորդանանեանը ւնիրում է եւս մէկ մամուլ: 1904 թին ւնիրաբերւում է մի նոր մամուլ եւս: 1930-ական թւերին տպարանը փոխադրւում է հարմարութիւններով օժտուած նորակառոյց շէնք (ուր մինչեւ օրս կայ): 1971-ին Վիկտորիա Շահբազեանը ւնիրում է վերջին տպագրական մեքենան որդու՝ Էմիլի յիշատակին: Որպէս Միջին Արեւելքի առաջին տպարան՝ իր երեքուկեսդարեայ գործունէութեան ընթացքում տպագրւել են հարիւրաւոր գրքեր, զանազան ազդեր եւ յայտարարութիւններ:

19 Ստոյգ տեղեկութիւններ չկան, թէ երբ է հիմնադրւել Մատենադարանը: Հաւանական է, որ շահաբասեան բռնագաղթի ժամանակ բերւած ձեռագրերի համար վանքի կառուցման օրերից իսկ մատենադարանին յատկացուած բաժին եղած լիներ: Հայաստան աշխարհից բռնագաղթւածները, թողնելով իրենց տունն ու գոյքը, չեն լքում ձեռագիր մատեանները եւ գուրգուրանքով հասցնելով՝ խնամքով պահում են: Սակայն 1770-1790 թթ. վրդոված օրերին բազում մատեաններ են ոչնչանում՝ դասւելով անպէտք ապրանքների շարքին կամ էժան վաճառւում անպատասխանատու անձանց միջոցով:





Ապրիլի 24-ի նահատակների յուշարձանը, տպագրական հին մեքենան եւ վանքի արեւմտեան դռան յախճասալիկապատ ճակատը (լուս.՝ Ս. Դանիէլեանի, 2019 թ.)

ռուցում է թանգարանի[20] համար երկյարկ մի նոր շէնք, որից յետոյ գրքերը նորից փոխադրւում են իրենց նախկին տեղը, ուր եւ այսօր մատենադարան-ընթերցարանն է գտնւում:

Եկեղեցու արեւելեան կողմում այգին է՝ խնամւած ածուներով, ուղղաձիգ բարդիներով եւ վարդի թփերով: Այգու հարաւում՝ երկյարկանի շէնքում, ժամանակին գրադարանն է եղել, իսկ այսօր վերի յարկը առաջնորդարանին է յատկացւած որպէս ընդունարան:

Այստեղ առաջնորդարանի հին շէնքն է եղել, որ քանդել են 1860-ին, եւ ինչպէս եղած արձանագրութիւնն է վկայում, նոյն տեղում 1865 թին Մովսէս արքեպիսկոպոս Գանձակեցին կառուցել է այսօրւայ շէնքը:

Սրան կից՝ բակի արեւելքում, 1915 թին կառուցւում է առաջնորդարանին պատկանող երկյարկ ուրիշ շէնք, որը թեմական ու կրօնական մարմիններին ծառայում է որպէս գրասենեակ: Այս շէնքը բաժանւում է արեւելեան կամ տնտեսական բակը մայր բակից: Տնտեսական բակում են եղել ուտեստեղէնների պահեստի սենեակները, ինչպէս նաեւ ջրաղացը, որի անունով էլ կոչւել է Ջրաղացի բակ: Վանքի այս բաժինը առանձին մուտքով միանում է հարաւային փողոցին, որի ճակատին խաչքար է տեղադրւած, եւ դռան կամարամասում արձանագրւած է.

Կառուցաւ դուռս յառաջնորդութեան տ(էր) Սահակ արքեպիսկոպոս Այվատեանի, յամի տեառն 1910 սեպտեմբերի:

Հրատ. Documents of Armenian Architecture, p. 105.

Եկեղեցին կառուցւել է 1664 թին հին եկեղեցու տեղում եւ կոչւում է Ս. Յովսէփ Արեմաթացի, որի Աջը այստեղ է պահւում:

Այն բարձր, քառանկիւնի շէնք է: Արտաքնապէս բաժանւած է 2 յարկերի եւ լայնքով 3 ու երկարութեամբ 6 ուղղահայեաց կամարանիստ բաժանումների: Հիւսիսից եւ հարաւից առաջին յարկի բարձրութեամբ եկեղեցին միացած է վանքապատկան յարակից շէնքերին, իսկ արեւելեան եւ արեւմտեան ճակատներն ազատ են:

Եկեղեցին աղիւսաշէն է, որի շարւածքում, որպէս զարդամոտիւ, տեղադրւած են կապոյտ յախճասալեր, իսկ կամարամասի բաժինները գաջով սւաղւած են: Ունի 2 մուտք: Գլխաւոր մուտքը բացւում է արեւմուտքից՝ զանգակատան բակից, որի կամարածածկում՝ յախճասալէ պատկերից բարձր, գեղեցիկ տառերով գրւած է.

Հիմնարկեցաւ Ամենափրկչի վանքս ի թիվն ՌՃԴ (1655), ի թ(ա)գ(աւո)ր(ո)ւթե(ան) երկրորդ Շահ(ա)թ(ա)սիի եւ կ(ա)թ(ո)ղ(ի)կ(ո)սութե(ան) տ(եառ)ն Փիլիպ(պ)ոսի ի ձեռն ս(ուր)բ ուխտիս առ(ա)ջն(ո)րդ Դաւթի վ(ա)րդ(ա)պ(ե)տի կամակց(ո)ւթ(եամ)ք / եւ տրօք Ջուղ(ա)յու ժողովրդ(ո)ց եւ աւարտեց(ա)ւ ՌՃԺԳ (1664) ամի: Որքան պ(ա)տ(ա)րագ եւ պ(ա)շտօնք, որ ի սմայ կատարի, լիցի մասն եւ բաժին համ(ա)կ կենդ(ա)նե(ա)ց եւ ննջե(ցե)լոց:

Հրատ. **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 3: Documents of Armenian Architecture, p. 105.

Տարբերթերցում. *Documents of Armenian Architecture-ում «երկրորդ Շահ(ա)թ(ա)սիի եւ կ(ա)թ(ո)ղ(ի)կ(ո)սութե(ան)» հատւածը բացակայում է (Ր.Ք.):*

20 Թանգարանը Սպահան քաղաքի տեսարժան վայրերից է, ուր ներկայացւում են զանազան ժամանակաշրջանների մետաղեայ դրամներ, արձաններ, նկարներ, ձեռագիր մատեաններ, եկեղեցական բարձրորակ ասեղնակար կտաւներ, արծաթագործ իրեր, յախճապակեայ անօթներ եւ իրեր, տարազներ, ձեռագործներ, գեղագրութիւններ, ձեռագրեր, արքայական հրովարտակներ, կոնդակներ, քարտէզներ, գորգի նմոյշներ եւ այլն:





Եկեղեցու արեւմտեան եւ հիւսիսային մուտքերի ճակատները (լուս.՝ Ս. Դանիէլեանի, 2019 թ.)

Հիւսիսում գտնուող շէնքն աւելացել է եկեղեցու կառուցումից յետոյ՝ հաւանաբար ԺԸ դարում՝ ընդհատելով հիւսիսային մուտքի անմիջական կապը պարտէզի հետ: Այս շէնքի ճակատին գրած է. *1606 Սուրբ Ամենափրկիչ 1655:*

Քակից մի աստիճան բարձր գտնուող պատշգամբը՝ քարէ 2 սիւներով եւ ձախ ու աջում եղած սենեակներով, նախամուտքի հանգամանք է ստեղծում, որը յիշատակագրութիւններում գաւիթ անունով է ճանաչուած: Եկեղեցին գաւթին միացած է երկար միջանցքով եւ արեւմուտքում աւարտում է փոքր մատուռով:

Բոլոր որմերը ծաղկազարդ որմնանկարչութեամբ են ծածկուած, որոնք այսօր, դժբախտաբար, շատ վնասուած եւ անխնամ վիճակում են: Եկեղեցու հիւսիսային մուտքի վերեւում Յիսուսի թաղման պատկերն է, որից ցած արձանագրուած է.

Յամի փրկչական 1857 նորոգեցաւ գաւիթս ի ժամանակս առաջնորդութ(եա)ն Թադէոս եպիսկ(ոպո)սի եւ ս(ր)բեցան պատկերք եկեղեցւոյն:

Հրատ. Documents of Armenian Architecture, p. 105.

Տարընթերցում. *Documents of Armenian Architecture-ում «փրկչական»-ի փոխարէն՝ «փրկչեան» (Ր.Ք.):*

Եկեղեցին կենտրոնագմբէթ սրահ է, որի 2 հսկայ որմնասիւները ներսի տարածքը 2 մասերի են բաժանում, արեւմուտքում՝ սրահը, եւ մի աստիճանով բարձրում գտնուող դասը: Սրահը ծածկուած է կիսակլոր գմբէթով, իսկ դասի մասը շեշտուած է որմնասիւներից եւ խորանի անկիւններից բարձրացող թմբուկով ու գմբէթով:

Եկեղեցին ներսից աւելի բարձր է, քան երկար, որով ընդգծւում է ուղղահայեացութիւնը նոյն ժամանակ եւ իր համաչափութեամբ դիտողին փոխանցում գեղեցիկ եւ հոգեւոր խորհրդաւորութեան զգացում:

Հնգանիստ խորանի 2 կողմերում աւանդատներ կան, որոնցից հարաւայինն աւելի մեծ է եւ միացած է մի ուրիշ սենեակի, ուր եւ պահւում են եկեղեցական սպասքներ եւ հոգեւորականների զգեստներ: Նման 2 սենեակներ կան հարաւում՝ դասից բացուող իր առանձին մուտքով:

Եկեղեցին ունի լուսամուտներ խորանում, արեւմուտքում եւ դասի մասում, սակայն գլխաւոր լոյսը ստանում է թմբուկի 8 պատուհաններից՝ շեշտելով կենտրոնական մասը:

Եկեղեցու կառուցումից շուրջ կես դար յետոյ՝ 1710 թուին, ներսի պատերի ներքեւի մասը՝ մօտ 1,65 մեթր բարձրութեամբ, կապոյտ ու դեղինը գերակշռող ծառ ու ծաղիկ զարդամոտիւ ունեցող յախճապակիներով է ծածկուել: Նուիրատուի արձանագրութիւնը կարդում ենք հիւսիսային դռան 2 կողերին.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է Խ(ա)չ(ա)ղէնց Մ(ո)ւր(ա)տին եւ ծն(ո)ղ(ա)ցն՝ խ(օ)ջ(ա)յ Ոհանին, Մէրտ(ա)տ(ի)կին, եւ կ(ո)ղ(ա)կ(ի)ց Մար(ե)ամտատիկին | եւ որդ(ւ)ո|ցն՝ Մարտիրոսին եւ Ոհանին, եւ դստերացն՝ Փարասին, Մուրասէ, Գուլնաբաթին, Թամինէ, Իբիրսինէ: Դ(ա)րձ(եա)լ յիշ(ա)տ(ա)կ է պ(ա)ր(ո)ն Մուրատին եւ եղբօրն՝ պ(ա)ր(ո)ն Յակոբջ|անին, եւ | Մարգարի որդի Ոհանէսին եւ հանգ(ո)ւց(եա)լ եղբարցն՝ Աբգարին, Ծատ(ո)ւրին, Աւաքին, | քի(վ)ն | Ռ-ճԾ|Թ (1710):

Հրատ. **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., h. Բ, էջ 3:

Տարընթերցում. ***Տէր Յովհաննեանցի*** *մոտ «Իբիրսինէ»-ի փոխարէն՝ «Իբիրսիմէ», «Ռ-ճԾ|Թ»-ի փոխարէն՝ «Ռ-ճԾ»: Documents of Armenian Architecture-ում՝ «Մ(ո)ւր(ա)տին»-ի փոխարէն՝ «Մուրատին», «Մէրտ(ա)տ(ի)կին»-ի փոխարէն՝ «Մէրտ տիկին», «Մար(ե)ամտատիկին»-ի փոխարէն՝ «Մարամտա տիկին» (Ր.Ք.):*

Եկեղեցու աղիւսէ յատակը 1968 թուին՝ նորոգութիւնների ժամանակ, փոխարինուել է մարմարէ քարածածկի:







Եկեղեցու սրահի (1710 թ.) եւ խորանի (1716 թ.) որմերը յախճասալերով պատելու արձանագրութիւնները (լուս.՝ Ա. Հախնազարեանի, 1975 թ.)

Հնգանիստ խորանի պատը եւս շուրջէշուրջ յախճասալէ ծածկ ունի, որի զարդամոտիւները տարբերւում են եղածից իրենց նրբութեամբ եւ հայկականութիւնը ցոյց տւող հրեշտակների պատկերներով: Արձանագրութիւնն է.

Սրբոյ սեղանոյս շրջապատ ապակեղէնս շինեցաւ առաջնորդութեան Մովսէս վ(ա)րդ(ա)պ(ե)տի Ջուղա(յ)եցու ի թվ(ի)ն ՌՃԿԵ (1716):

Հրատ. **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 5:

Նոր Ջուղայի եկեղեցիների, ի մասնաւորի՝ Ս. Բեթղեհէմի ու Ս. Ամենափրկիչի նկարապատումն առանձին ուսումնասիրութեան նիւթ է:

ԺԷ դարից սկսած՝ Նոր Ջուղայի հայ վաճառականները յարաբերութեան մէջ են եղել Եւրոպայի վաճառականական կենտրոնների հետ, ինչպէս՝ Վենետիկի ու Ամստերդամի, որտեղ ծանօթացել են եկեղեցիները զարդարող որմնանկարիչների հետ ու նրանց Պարսկաստան բերել:

Նոյն ժամանակ պարսկական արքունի պալատները զարդանկարելու համար եւրոպացի որոշ մասնագէտներ Պարսկաստանում էին: Նրանցից մի քանիսը մինչեւ իրենց կեանքի վերջը մնացել են Իսֆահանում եւ վախճանւելուց յետոյ ամփոփւել Նոր Ջուղայի հայկական գերեզմանատանը:

Հայկական եկեղեցիներում կա՛մ ուղղակի իրենք են աշխատել եւ կա՛մ իրենց աշակերտած տեղացի հայերը, որոնցից մի քանիսը վարպետութեան աստիճանի են հասել՝ թողնելով հայ ճարտարապետութեան մէջ եզակի հանգամանք ունեցող Նոր Ջուղայի արւեստը:

Յախճասալերից վերեւ եկեղեցու բոլոր պատերը, կամարները եւ վերջապէս գմբէթը ծածկւած են Հին եւ Նոր Կտակարանի դրւագներ ներկայացնող որմնանկարներով, ինչպէս նաեւ պատկերներն իրարից անջատող եւ տարածութիւնները լցնող ծաղկազարդերով:

Որմնանկարները պատերը ծածկում են 3, յաճախ 4 շարքով:

Սրահի հիւսիսային պատին 7 հատւածներից բաղկացած դրախտի եւ դժոխքի տեսարանն է: Դատաստանի պատկերի կենտրոնում նկարւած է եկեղեցին նկարազարդողը՝ խօջայ Աւետիք Ստեփանոսեանը՝ երկու ձեռքով խաչը գրկած:

Եկեղեցու խորանի պատի արձանագրութիւնն ու պատուհանների տակ գտնւող 4 արձանագրութիւնները վկայում են խօջայ Աւետիքի նւիրաբերումը:

Խորանի պատի գրութիւնն է.

**Ձեզ աղաչեմ, ընթերցո՛ղ տառիս, յիշել նկարօղ զսուրբ խորանիս, որ միշտ տարփմամբ ցանկայր բանիս, սա զԱւետիքս գիեզահոգիս, գիօրն հանգուցեալ Ստեփանոսիս, զՄարգարիտ սնուցողիս, Նազար աղէս ընդ Ոհանիս, գիարազատ եղբարքն որիս, գոլ զուք լինել երկու որդիք բարեպաշտիս, եւ Սահակն, Մարտիրոսի, Սօլթանս էլ իմ կենակցիս, զսոսա յիշել միշտ ի ուխտս, ի թուին ՌՃ տասնիս 1661 ապրիլ ամսոյ Ի եւ Ե (25)-իս:*

Հրատ. **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 4-5: Documents of Armenian Architecture, p. 105. *Ա. Հախնազարեանը, շեշտը դնելով կառոյցների ճարտարապետութեան վրայ, լոկ կրկնել է նախորդ հրատարակիչների ներկայացւած արձանագրութիւնները: ՀՃՈՒ հիմնադրամի շտեմարանում առկայ լուսանկարների շնորհիւ մեզ յաջողւել է դրանց մեծ մասը ստուգել, ճշտել եւ հրատարակել վիմագրագիտական չափանիշներին համապատասխան:*

Աստղանիշով (*) նշել ենք այն արձանագրութիւնները, որոնք մասամբ կամ ամբողջապէս ստուգելու հնարաւորութիւն չենք ունեցել (Ր.Ք.):

Սրահի հարաւային կողմի պատկերները սկսւում են Ս. Գրիգոր Լուսաւորչի չարչարանքներով, որից վեր ծաղկազարդով շրջապատւած եկեղեցական խորհուրդներն են:

Նախախորանի կամ դասի հարաւից սկսած մինչեւ հիւսիսային պատը՝ պատկերների առաջին շարքում, «Գործք Առաքելոց»-ից մինչեւ Աստուածածնի թաղման պատկերներն են, որոնց յաջորդում է Աստուածածնի աւետումից մինչեւ Յիսուսի ծնունդը, իսկ վերի մասը Հին Կտակարանին վերաբերող դրւագներ են:

Խորանից աջ ու ձախ Յակոբի երազի եւ դրա մեկնաբանութեան պատկերներն են:

Հնգանիստ խորանը՝ իր որմնախորշերով եւ կամարաձածկով, որմնանկարներով է զարդարւած, ինչպէս՝ որմնասիւների բարձրում, անկիւններում գտնւող ստալակտիդ տրոմպներն ու 3-ական հրեշտակները:

Խորանում խաչկալի պատկերը «Յիսուսի Յարութիւն»-ն է՝ թւագրւած *ՌՃՄ (1660)*: Թմբուկի ներսում 8 պատուհաններով անջատւող պատկերներ կան, որոնք Արարչութիւնն են ներկայացնում՝ սկսած Ադամի եւ Եւայի ստեղծումից մինչեւ Կայէնի ու Աբելի պատարագը[21]: Գմբէթը զարդարւած է ոսկեզօծ գորգանախշերով:

Եկեղեցու նկարազարդումը կատարել են տարբեր վարպետներ, որոնց որակումը տարբեր ուսումնասիրութեան նիւթ է:

Նկարիչներից մի քանիսի անունները մեզ ծանօթ են յիշատակագրութիւնից, ինչպէս՝ Սիմոնը, Սինասը, տէր Ստեփանոսը եւ Յովհաննէս Տիեզերալոյս վարդապետը:

Խորանի աջ կողմում գրւած է.

**Բանիւն Կարապետ մախթեաց վասն պատկերահան Սիմոնիս Դի Թաթոսի, թիվն ՈՃԿԹ փոքր 1784:*

Հրատ. Documents of Armenian Architecture, p. 105.

Ձախ կողմում՝ Աստուածածնի նկարի տակ.

**Կոյս սուրբ, ողորմեա՛ տէր Ստեփանոս պատկերահանիս:*

Հրատ. Documents of Armenian Architecture, p. 105.

Որպէս կիրառական արւեստի որակեալ նմոյշներ՝ պիտի յիշել եկեղեցու սեղանի՝ 1857 թ. ծաղկաքանդակ աստիճանները, նոյն թւականին պատրաստւած առաջնորդական աթոռը կամ 1804 թիւն Չինաստանում ասեղնագործւած սեղանի վարագոյրը, որի վրայ արձանագրւած է.

**Նկարեցաւ գոգնոցս այս ի Չին, համիրայ 20 եւ յամի տեառն 1804 վասն յիշատակի Թորոս Կարսարեետեանիս առ ի Սրբոյ Ամենափրկչի վանին, որ ի Նոր Ջուղա:*

Հրատ. Documents of Armenian Architecture, p. 106.



Եկեղեցին հիւսիս-արեւմուտքից եւ հին ու նոր զանգակատները (լուս.՝ Ա. Յախնագարեանի, 1975 թ.)

Խորանի այսօրւայ ձեռագործ վարագոյրը պատրաստւել է 1905 թիւն Հնդկաստանի Կալկաթայում: Դրանից առաջ կախւած էր 1768 թիւն Մադրասում գործած մէկ ուրիշ ձեռագործ վարագոյր:

Եկեղեցու տանիքին՝ արեւմտեան դռան վերեւում է գտնւում հին ու համեմատաբար փոքր զանգակատունը, որի աղիւսի կամարների մէջ տեղադրւած են խաչազարդերով յախճապատ զանգակները:


Նոր եռայարկ զանգակատունը 1702 թիւն աղա Յովհաննէսեան Ջամալեանի ծախսով կառուցւում է եկեղեցու արեւմտեան բակում՝ ազատ տարածութեան մէջ[22]: Այն նստած է քարէ կլոր 4 սիւների վրայ եւ մի աստիճան բարձր պատւանդանից է սկսւում: Այդ սիւները կիսակոր աղիւսէ կամարներով իրար են միացած՝ իրենց վրայ առնելով զանգակատան երկրորդ հարկը, որն անցեալում ծառայել է որպէս բաց մատուռ՝ Գաբրիէլ եւ Միքայէլ հրեշտակների անունով: Երրորդ հարկում է գտնւում ութանկիւն, համեմատաբար փոքր գմբէթը՝ նստած քարէ 8 սիւներին:

Զանգակատան 4 կողմերը զարդարւած են աղիւսի մէջ դասաւորւած յախճապատ զարդամոտիւներով, իսկ հիւսիսային ճակատը շեշտւում է կառուցման գեղեցիկ յիշատակագրութեամբ:


Զանգակատան յատակին, բակում եւ եկեղեցու հիւսիսում գտնւող շէնքի մէջ բազմաթիւ տապանաքարեր կան: Ներքեւում՝ պատւանդանի վրայ է գտնւում զանգակատունը կառուցողի գերեզմանը:

21 **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 10:


22 Նշ. աշխ., հ. Բ, էջ 5:



Վանքի եւ եկեղեցու յատակագծերը (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը (ՀՃՈՒ), 2026 թ.)



Եկեղեցու եւ զանգակատան հիւսիսային ճակատը (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը, 2026 թ.)



Եկեղեցու եւ զանգակատան կտրուածքները դէպի հիւսիս (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը, 2026 թ.)

Նոր Ջուղայում, Ս. Ամենափրկիչ վանքից բացի, գոյութիւն են ունեցել 24 եկեղեցիներ, իսկ Սպահանի քաղաքամիջի բոլոր եկեղեցիներն աւերուել են, երբ հայութիւնը լքել է իր թաղերը: Նոր Ջուղայի եկեղեցիներից մնացել են միայն 12-ը, որոնց ցանկը հետեւեալն է.

Ա. Կանգուն եկեղեցիներ.

	հմն. թ.	կառուցող	թաղ
1. Ս. Աստուածածին	1613	խօջայ Աւետիք	Մեծ Մէյդան
2. Ս. Բեթղեհէմ	1628	խօջայ Պետրոս	Մեծ Մէյդան
3. Ս. Գէորգ	1611	խօջայ Նազար	Փոքր Մէյդան
4. Ս. Գրիգոր Լուսաւորիչ	1633	խօջայ Խաչիկ	Փոքր Մէյդան
5. Ս. Կատարինեան	1623	խօջայ Եղիազար	Չարսու
6. Ս. Մինաս	1659	ժողովուրդ	Դաւրէժ
7. Ս. Յակոբ	1607	ժողովուրդ	Մեծ Մէյդան
8. Ս. Յովհաննէս Մկրտիչ	1621	խօջայ Եղիազար	Չարսու
9. Ս. Ներսէս	1666	Աւետիս Գիլանեան	Քոչեր
10. Ս. Նիկողայոս	1630	ժողովուրդ	Ղարագէլ
11. Ս. Սարգիս	1650	ժողովուրդ	Երեւան
12. Ս. Ստեփանոս	1614	ժողովուրդ	Յակոբջան

Բ. Աւերուած եկեղեցիներ.

	հմն. թ.	կառուցող	թաղ
1. Ս. Անանիա Առաքել	անյայտ	անյայտ	Ղէյնուն
2. Ս. Աստուածածին	անյայտ	անյայտ	Գասկ
3. Ս. Աստուածածին	անյայտ	խօջայ Շաֆռազ	Մարնուն
4. Ս. Թովմա	1695	անյայտ	Փոքր Մէյդան
5. Ս. Հոգի	անյայտ	խօջայ Աւետիք	Մեծ Մէյդան
6. Ս. Հրեշտակապետաց	անյայտ	անյայտ	անյայտ
7. Ս. Մինաս	անյայտ	անյայտ	Գասկ
8. Ս. Յակոբ (Բաղաթայ)	1666	անյայտ	Երեւան
9. Ա. Յակոբ (Մուրադենց)	1632	Մուրադենք	Մեծ Մէյդան
10. Ս. Յովհաննէս	անյայտ	Շահուելենք	
11. Ս. Նազարէթ	1611	անյայտ	Մէծ Մէյդան
12. Ս. Սարգիս	1609	անյայտ	Ղէյնուն

Սպահանի քաղաքամիջի եւ շրջանի եկեղեցիներ.

	հմն. թ.	աւերման թ.	վայր
1. Ս. Ամենափրկիչ	ԺԷ դ.	ԺԷ դ.	Նարանղալայի եզր
2. Ս. Աստուածածին	ԺԷ դ.	ԺԷ դ.	Նարանղալայի եզր
3. Ս. Բեթղեհէմ	ԺԷ դ.	ԺԷ դ.	Շամսաբադ
4. Ս. Գրիգոր Լուսաւորիչ	ԺԷ դ.	ԺԷ դ.	Թրսկան գիւղ
5. Ս. Գրիգոր Լուսաւորիչ	ԺԷ դ.	ԺԷ դ.	Գովդը Զանդարու

Ս. Վարդան եկեղեցին՝ կառուցած 1705 թուին, պատկանում է Հայ կաթողիկէ համայնքին:

Հայ աւետարանական եւ Շաբաթապահ գալստական համայնքներն ունեն իրենց աղօթավայրերը՝ կառուցած 1875 եւ 1957 թուերին Քոչեր եւ Յակոբջան թաղերում:

Գտնւում է Նոր Ջուղայի Մէյդան թաղում՝ նոյնանուն հրապարակի արեւելքում՝ խօջայ Նազարի պողոտայի հարաւում եւ Ս. Աստուածածին եկեղեցուց հիւսիս, որից բաժանւում է փողոցով:

Եկեղեցին կառուցւել է 1628 թուին խօջայ Պետրոս Վէլիջանեանի կողմից[23]: Համաձայն աւանդութեան՝ մի անգամ՝ Ջատկին, խօջան կնոջ հետ ուզում է Ս. Աստուածածին եկեղեցի մտնել, բայց տեղ չի լինում: Դրանից վրդովուած՝ որոշում է մի ուրիշ՝ իրեն վայել եկեղեցի կառուցել եւ դրա կողքին կառուցում է Նոր Ջուղայի ամենամեծ գմբէթով, բարձրակառոյց եկեղեցին՝ ներսի եզակի որմնանկարչութեամբ: Այլ աւանդութեան համաձայն՝ շահի հրամանով կտրում են մի հայ վարպետի ձեռքը, որն Իսֆահանի ամենամեծ մզկիթի գմբէթն էր կառուցել: Նա, սակայն, մի քանի տարի յետոյ մի ձեռքով կառուցում է աւելի մեծ՝ Ս. Բեթղեհէմի երկածայն գմբէթը:

Դարերի ընթացքում եկեղեցին նորոգութիւնների է ենթարկուել: 1870-ին աղա Յովհաննջան Էլիզեանը հիմնովին նորոգում է խաթարուած վիճակում գտնւող շէնքը: Յաջորդը տեղի է ունենում 1899-ին՝ Հնդկաստանում Յովսէփ Աբգարեանի կատարած հանգանակութեան շնորհիւ: Ցաւալի փոփոխութիւններ են կատարւում եկեղեցուն շրջապատող շէնքերում: 1935 թուին հիւսիսում Նազարի պողոտան լայնացնելու պատճառով անջատւում է բակը, իսկ հարաւային եւ արեւելեան բակերը բաժան-բաժան են լինում խանութների եւ պահեստատների:

Այսօր Նոր Ջուղայի գմբէթաւոր ամենամեծ եկեղեցին ունի ամենափոքր բակը, որը 2 մուտքերով միանում է հիւսիսում եւ հարաւում գտնւող փողոցներին: 1984 թուին մասամբ նորոգւում են, ծեփւում՝ բակը նայող պատերը, սակայն այսօր ընդհանուրն անխնամ տպաւորութիւն է թողնում:

Հիւսիսային դարպասի վերում՝ 3 փոքր խաչքարերի վրայ, տեղադրւած է այս յիշատակագրութիւնը.

**Յիշատակ է սուրբ խաչս Յարութիւնին եւ իր տոհմենց*:
Հրատ. Documents of Armenian Architecture, p. 103.

Փողոցից տեսողութիւնը հատելու նպատակով մուտքը նախ տանում է մի փոքր միջանցք, որտեղից ճանապարհը թեքւում է դէպի բակ: Միջանցքում՝ քարի վրայ, գրած է.

**Սուրբ եկեղեցիս Բեթղեհէմի կառուցաւ ի 1628 թուին:*
Հրատ. Documents of Armenian Architecture, p. 103.

Հարաւակողմ փողոցից բացւող կամարածածկ դարպասը՝ ճակատի խաչքարով եւ 2 կողմում գտնւող քարէ նստատեղիներով, նմանւում է Նոր Ջուղայի միւս եկեղեցիների մուտքերին:

23 Եկեղեցու մասին տե՛ս **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 173-179:





Ս. Բեթղեհէմ եկեղեցին հարաւ-արեւմուտքից եւ հիւսիս-արեւմուտքից (գծանկարը՝ Թէյլօրի, 1881 թ. (արտատպ.՝ Dievlafoy J., նշ. աշխ., էջ 227) եւ լուս.՝ Ժ. Ոսկանեանի, 1960-ական թթ.)

Այստեղից նախ ութանկիւն, ապա երկար միջանցքով հասնում ենք բակ, որի հարաւում սենեակներ կան, ուր այսօր ապրում են պահապանն ու չքաւոր ընտանիքներ:

Այս սենեակների դռների եւ պատուհանների արտաքին համաչափ բաժանումները համադրւել են բակի պատերի բաժանումների հետ՝ ստեղծելով ճարտարապետական միասնականութիւն:

Բակի արեւմուտքում՝ եկեղեցու արեւմտեան մուտքի դիմաց, կամարածածկ պատշգամբ կայ, ուր գտնւում են եկեղեցին կառուցողի՝ խօջայ Պետրոսի եւ իր ընտանիքի գերեզմանները:

Նոր Ջուղայի տարբեր անկիւններից երեւացող հարազատ տեսարաններ են բակի 3 բարդիներն ու եկեղեցու գմբէթը:

Բակն աղիւսապատ է՝ իր մէջ ունենալով 70-ից աւել տապանաքարեր: Տեսնում ենք խօջաների, վաճառականների, արհեստաւորների եւ հոգեւորականների բազմաթիւ տապանաքարեր՝ իրենց արհեստը խորհրդանշող գործիքների քանդակներով:

Այստեղ է գտնւում Հաջի Հաշեմխանի կողմից սպանւած Սիմոն Հայրապետեանի տապանաքարը, որի վրայ քանդակւած է գետին ընկած եւ գլուխը մարմնից անջատւած մի մարդ.

**Աստ ամփոփեալ ներ տապանի զմարմին իշխան Սիմէօնի՝ էր որդի Հայրապետեանի, այր գօրաւոր եւ պիտանի խղճուկ, ջրվան քառասնամի նահատակեալ, աստէն դնի ի յերկնային այն մատենի, ընդ նահատական դասեալ լինի ի թվին երկուհարիւր իննի դամա ԺԹ (Ի) (1824):*


Հրատ. **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Ա, էջ 424-425: **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 89: Documents of Armenian Architecture, p. 103.

Եկեղեցին դրսից քառանկիւնի մեծ շէնք է: Հիւսիսային, արեւելեան պատերն ամբողջութեամբ եւ հարաւայինի արեւելեան կեսը պարզ են, ծեփւած ու բարձր, միայն արեւմտեան ճակատը երկյարկանի է եւ աղիւսէ խոշոր 5 որմնասիւներով բաժանւած է 4 մասերի:

Որմնասիւների միջեւ ներս ընկած տարածութիւնները հաւասար են՝ բացի մուտքի մասից (վերին յարկի հետ միասին), որ աւելի լայն է եւ շեշտող հանգամանք ունի: Որմնասիւները աղիւսապատ են: Արեւմտեան ճակատի որմնասիւների եւ կամարների միջեւ ընկած եռանկիւնի տարածութիւնները յախճապակեայ զարդեր ունեն, իսկ կամարներն ու պատերը ներսից ծեփւած են եւ անհարազատ կապոյտ գոյնով ներկւած: Որմնասիւները կամարների բարձրութեամբ իրար են միացած գերաններով:



Խօջայ Պետրոսի եւ նրա ընտանիքի անդամների տապանաքարերը (լուս.՝ Ս. Դանիէլեանի, 2019 թ.)



Համալիրի գլխաւոր եւ եկեղեցու յատակագծերը (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը, 2026 թ.)

Աղիւսէ երկշերտ գմբէթն արտաքինով նման է Իսֆահանի մզկիթներին, սակայն գերիշխողը մեծութիւնն է, նաեւ՝ գծերի համաչափութիւնը:

Երկյարկանի փոքր զանգակատունը ԺԹ դարում աւելացել է տանիքի արեւմուտքում՝ մուտքի վերեւում՝ շաղկապելով արտաքինը հայկական ոճին: Զանգակատան արեւմտեան ճակատին արձանագրուած է.

Կառուցաւ 1897:

Եկեղեցին ունեցել է 3 մուտք, որոնցից հիւսիսայինը Նազարի պողոտայի լայնացման պատճառով փակւել է: Գլխաւոր դուռն արեւմուտքում է, իսկ հարաւայինը բացւում է նեղ ու երկար միջանցքում, որի վրայ կարդում ենք 1844 թականին աւարտուած նորոգութիւնների յիշատակագրութիւնները.

**Յիշեալ է տէր, զմահտեսին խօջայ Պետրոս՝այր ցանկալին, զՎէլիջան հայրն նորին, ընդ տիկին մօր իր Շուշանին, եկեղեցիս Քեթրահիմին, որ շինեցաւ արդեամբ նորին ի յիշատակ իւրոյ տոհմին եւ զաւակաց իւր տօնելին, ի թուին հայոց 1077-ին (1628): Արձանացաւ ի տէր Յովհաննիսէ Գալըստեան 1293 (1844):*

Հրատ. **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 176: **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 85: Documents of Armenian Architecture, p. 103.


Արեւմտեան դռան վերեւում՝ կապոյտ յախճասալի վրայ, ծաղկազարդերով շրջապատուած սպիտակ, գեղեցիկ տառերով յիշատակութիւնները վկայում են 1899 թականի նորոգութիւնների մասին.

Յամի | 1628 ս(ուրբ) եկեղեցիս հիմնադրի, | գերանկար ոսկիապատ զարդարի, | յ(ը)նթացս 20 ամաց աւարտի, | ձեռամբ խօջա Պետրոս Վէլիջանի | եւ | յամի տեառն 1899, | ի հայրապետութե(ա)ն տ(էր) տ(էր) Մկրտչի Ա կ(ա)թ(ո)ղ(ի)կ(ո)սի Ամ(ենայն) Հայոց | եւ | յառաջնորդութե(ա)ն տ(էր) Մաղաքիա ա(րք)եպ(իսկոպո)սին Ջուղայու | եւ | ի թագաւորութեան պարսից Մօզաֆէրէդին շ(ա)հին | եղեւ | նորոգութիւն ս(ուր)բ Բեդղահէմի եկեղեցւոյս | արդեամբ | բարեպաշտ նուիրատուաց հնդկաբնակ հայոց | ս(ուր)բ եկեղեցին Նազարեթայ նուիրեալ 1000 կօ ռ(ու)փ(ի)ս, | գեր(պատիվ) պ(ա)ր(ո)ն(ա)յք Աբգար եւ կօ(մպանի) նուիրեալ 1000 կօ ռ(ու)փ(ի)ս, | եւ այլ ոմանք մեծ պ(ա)ր(ո)ն(ա)յք նուիրեալ 1425 կօ ռ(ու)փ(ի)ս, | հանգանակութեամբ պ(ա)ր(ո)ն Յովսեփայ Մ. Աբգ(ա)րե(ա)ն | ուստի | նուիրատուքն յիշեսցին միշտ առաջի անման | գառին Աստուծոյ:


Հրատ. **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 86-87: Documents of Armenian Architecture, p. 103.

Տարբերություն. *Documents of Armenian Architecture-ում «1628»-ի փոխարէն՝ «1625», «Մկրտիչ Ա»-ի փոխարէն՝ «Մկրտիչ Ս», «Մաղաքիա ա(րք)եպ(իսկոպո)սին»-ի փոխարէն՝ «Մաղաքիա ս. եպիկ.» (Ր.Ք.):*

Եկեղեցու ներսում մուտքի բաժինը 2 մեծ որմնասիւներով եւ իրար միացնող կամարով բաժանւում է կենտրոնական մասից: Մուտքի բաժնի հիւսիսը հնգանիստ ապսիդանման է, իսկ հարաւը ուղղանկիւն է, որտեղից բարձրանում ենք կանանց բաժնի երկրորդ յարկը: Հիւսիսում եւս՝ պատի մէջ, երեւում է փակւած դռան հետքը:



Եկեղեցու կտրուածքը դէպի հիւսիս (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը, 2026 թ.)



Եկեղեցու արեւմտեան ճակատը (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը, 2026 թ.)

Նոր Ջուղայի միւս եկեղեցիների նման կամարների հիմքում որմնասիւները գերաններով իրար միացած չեն, եւ միակը կանանց բաժնի պատշգամբն է, որ փայտաշէն է՝ հաւանաբար յետագայում աւելացրած:

Եկեղեցու եւ խորանի յատակը քարածածկ է: Կենտրոնագմբէթ է՝ շեշտուած իր ծաւալի չափերով եւ ուղղահայեացութեամբ:

Ռեթղեհէմ եկեղեցին Նոր Ջուղայում ճարտարապետութեան եւ որմնանկարչութեան տեսակետից եզակի հանգամանք ունի: Մեծ 4 որմնասիւներին նստած գմբէթը յատակագծում ընդգրկում է եկեղեցու մեծագոյն տարածութիւնը՝ ստեղծելով այն տիրող (գերակշռող) տպաւորութիւնը, որ ստանում ենք Հայաստանի միջնադարեան կենտրոնագմբէթ եկեղեցիներում:

Խորանը մեծ է, իր խորութեամբ ու բարձրութեամբ համադրուած գմբէթի հետ՝ ստեղծելով ճարտարապետական համաչափութիւն, որը դիտողի մէջ կառաջացնի գեղեցիկի զգացում:

Խորանի 2 կողմերում աւանդատներ կան, որոնք իրենց վերում եւս ունեն մի հարկ: Այդ 2 հարկերի միջեւ աստիճան չկայ: Հարկաւոր եղած ժամանակ ելարանով են բարձրացել եւ սեղեակներից օգտուել որպէս ապահով պահեստարաններ:

Եկեղեցին ներսից ամբողջութեամբ զարդարուած է որմնանկարչութեամբ, իսկ պատերի ներքեւի մասը, ինչպէս նաեւ խորանում 1,30-1,50 մետր բարձրութեամբ ծածկուած են յախճապալերով: ԺԷ դարի տեղական ոճին պատկանող յախճապալերը՝ կանաչ, կապոյտ, դեղին եւ ճերմակ գոյներով, ծաղկազարդ թռչնապատկերներ ունեն: Յախճապալերին անմիջապէս յաջորդում են որմնանկարների 2 գոտիները, որտեղ պատկերուում են սրբերն ու մարտիրոսները եւ Հին ու Նոր Կտակարանի դրուագները:

Դրանք իրարից բաժանւում են բուսական եւ երկրաչափական ծաղկազարդ երիզներով: Այս նկարների շարքում եւ աւելի վեր՝ մինչեւ եկեղեցու ստալակտիդէ տամբուրը, այն ծածկուած է համաչափ գորգանախշերով, որոնց մէջ կան նաեւ պատկերներ ու կառուցողների, վարպետների եւ նկարիչների բազմաթիւ յիշատակագրութիւններ:

Սրահի նկարների շարքում դրախտի պատկերն է, որի ձախ անկիւնում ծնկաչոք խօջայ Պետրոսն է՝ գլխի վերեւում նկարուած թագով՝ որպէս իր բարեգործութեան հաստատում:

Եկեղեցու կառուցման արձանագրութիւնը գտնւում է գմբէթի ներքեւում՝ պատուհանների տակ.

Հազար ՀԷ թվին (1628), որ էր անցեալ հայոց ա/զգին, աւարտեցաւ եկեղեցին գերահռչակ | եւ պանծալին, համանման աղին դրախտին, | եւ կամ Նոյեան ս(ուր)բ Տապ(ա)նին, ի ժամն(ա)կս Շ/ահ Աբասին, եւ մեր սրբոյ հայրապ(ե)տին՝ | տ(է)ր Մովսէսի քաջ հռետորին, դիտապետ/ի այսմ նահանգին՝ հեզահոգի տ(է)ր Խա/չատրին, որ շինեցաւ ձեռամբ մեծին | խօջայ Պետրոս այր ցանկալին, խօջայ Պօղոս որդի նորին, եւ փափագմամբ աւարտեցին, սակս յիշման հոգին նոցին, ծնողաց սորին՝ Վէլիջանին, Շուշան անուն մօրն նորին, տէր ողորմեսցի ամենեսեան, որք հանդիպիք տեսլեամբ սորին, զխօջայ Պետրոսն բաղձալին, յիշեալ լինէք միշտ արժանին եւ որք յիշեն, յիշեալ լիցին ի Քրիստոս յաւիտեանին:

Հրատ. **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 173-174: **Սինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 82-83: **Երեմեան Ա.**, Նոր-Ջուղայի ԺԷ-րդ դարու որմնանկարչական յուշարձանը, Նիւ Եորք, 1942, էջ 9: Documents of Armenian Architecture, p. 104.

Յատուկ ուշադրութեան արժանի են խորանի եւ դասի որմնանկարները, որոնք իրենց տեսակով տարբերւում են միւսներից. եւ՛ ուրոյն գոյն ու գծերով, եւ՛ արտայայտութեամբ աւելի Վասպուրականի միջնադարեան գրչագրութիւնն են յիշեցնում:

Խորանի հնգանիստ պատերի եւ խորշերի որմնանկարչութիւնը ծաղկազարդ գոտիով 2 յարկերի է բաժանուած:

Ներքեւի մասում՝ պատերին, 2 շարք իրար վրայ 20 սրբերի պատկերներն են, իսկ խորանի աջում ու ձախում՝ Ս. Գրիգոր Լուսաւորչինը եւ Ս. Ներսէսինը: Խորանի երկհարկանի որմնախորշերում Ս. Գրքից վերցրած կրօնական դրւագներ են նկարուած, որոնք դէպի վեր հանգում են զարդամոտիւներով ծածկուած ստալակտիդների, իսկ կենտրոնում՝ գեղեցիկ շրջանակի մէջ նստած եւ 4 աւետարանիչներով շրջապատուած Յիսուս Քրիստոսն է, որի ստորին մասում արձանագրուած է.

Յիշեց(է)ք ի Ք(րիստո)ս զխաւջ(ա)յ Պետ|րոսն, որ շինեց(ա)ւ ձեռամբ մեծին խաւջ(ա)յ | Պետրոս այր ց(ա)նկ(ա)լին, հօրն իւրոյ Վէլիջանին եւ մօրն | Շուշանին: Տ(է)ր Ա(ստուա)ծ ող(ո)րմեսցի սոցին, | թվին ՌՀԷ (1628):

Հրատ. **Տէր Յովհաննեաց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 174: **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 83: Documents of Armenian Architecture, p. 104.

Խորանի խաչաձեւ պատուհանը փակւել է, որի վերին մասի արձանագրութիւններում կարդում ենք յայտնի նկարիչ Մինասի անունը.

**Նկարեցաւ պատկերս ձեռամբ Մինասին, Մարտիրոսին: Նկարեցաւ ծաղիկս ձեռամբ Աստուածատուրին:*

Հրատ. **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 77: Documents of Armenian Architecture, p. 104.

Աստուածատուրը հաւանաբար Բոգդան Սոլթանովն է, որին 1667-ին տանում են Մոսկւա՝ ցարերի պալատները նկարազարդելու համար:

Յուրահատուկ գեղեցկութիւն ունեն դասի 2 կողմերի պատկերները, ուր տեսնւում են Յիսուսի մկրտութիւնը Յորդանան գետում, միւսում՝ Յիսուսը Մարիամի գրկում եւ Յովսէփն ու 3 մոգերը: Կենտրոնական մասի որմնասիւները բարձրանալով կոտրած կամարներով իրար են միանում, որոնց 4 անկիւններում 2-ական հրեշտակներ են նկարուած:

Թմբուկը ցածր է, դէպի ներս թեքւած եւ իր 8 մեծ պատուհաններով լուսաւորում է եկեղեցին: Պատուհանների միջեւ ընկած տարածութիւնները ծածկուած են որմնանկարներով, որոնք ներկայացնում են Ս. Գրքից վերցրած կրօնական դրւագներ, ինչպէս՝ Ադամի ստեղծումը, Կանայի հարսանիքը, անառակ որդու առակը, 12 հայրապետները եւ մինչեւ ոտնալւայի տեսարանը:

Ոսկեգոյն ծաղկազարդ 2 գոտիները շրջանցում են թմբուկի վարն ու վերեւը, որին յաջորդում են գմբէթի՝ ոսկէգոյնի վրայ կապոյտ ճոխ ծաղկազարդերը՝ յիշեցնելով Իսֆահանի գորգանախշ ոճը:

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ

Գտնւում է Նոր Ջուղայի Յակոբջան թաղում: Կառուցւել է 1614 թւին[24] ժողովրդի մեկենասութեամբ: Յարակից շինութիւնները դարերի ընթացքում զարգացել, փոփոխութիւնների են ենթարկւել եւ այսօրւայ վիճակը ստացել: Դա են վկայում եկեղեցու տարբեր մասերում տեղադրւած արձանագրութիւնների թւականները:

Եկեղեցին՝ իր շրջապատող բաժիններով, մի համալիր է, որը 3 մուտքերով (2-ը՝ արեւելքից, 1-ը՝ հիւսիսային պարսպի արեւմտեան եզրից) միանում է քաղաքին: Այն երկար կամարածածկով անջատւած է արեւելքում գտնւող փողոցից եւ իր միւս 3 կողմերում այսօր ունի բակեր:

Եկեղեցու հիւսիսում երկար ու նեղ բակն է, որի արեւելքում է գտնւում պահապանի բնակարանը: Նեղ բակն արեւմուտքից կից է արեւմտեան կամ գլխաւոր բակին, որի մէջտեղում կան մի քանի ծառեր ու թփեր: Ժողովարանը, խցերն ու բարձրորակ բնակարան-սենեակները գտնւում են այս բակի 3 կողմերում: Բակի հիւսիս-արեւմուտքից մի նեղ անցք տանում է դէպի տնտեսական մասի մուտքը: Եկեղեցու հարաւում էլ առանձին մուտքով մի բակ կայ՝ շրջապատւած բնակարան-սենեակներով:

Այս բակում էր գտնւում Ս. Աստուածածին մատուռը, որը 1973 թւին վերածւում է բնակարանի: Սա ինքնին վկան է օրւայ պատասխանատուների՝ հայ մշակոյթին ու պատմութեան ցոյց տւած վերաբերմունքի...

Այստեղ է եղել Ս. Ամենափրկիչ դպրոցը, ուր ԺԹ դարի 30-ական թւականներից դասաւանդել է յայտնի մտաւորական Մեսրոպ Թաղիադեանը:

Ըստ սովորութեան՝ բակերն աղիւսածածկ են՝ իրենց մէջ տեղադրւած ունենալով բազմաթիւ տապանաքարեր: Ընդհանուրը խնամւած տպաւորութիւն է թողնում:

Ս. Ստեփանոսը Նոր Ջուղայի ամենամեծ եկեղեցին է: Կառուցւել է աղիւսից եւ քահգելով ծեփւել: Արեւելեան եւ հարաւային պատերի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ այն նախ ազատ տարածութեան մէջ է կառուցւել, սակայն յետագայում օրւայ պահանջների բերմամբ աւելացել են յարակից շինութիւնները եւ տեղ-տեղ միացել նրան:

Ունի 3 դռներ, որոնցից հիւսիսայինը բացւում է եկեղեցու երկայնքով տարածւած կամարածածկում: Երկփեղկանի դռան աջ ու ձախ կողմերը զարդարւած են յախճապակեայ 2 կենաց ծառերով, իսկ դռան վերում նկարւած է Աստւածածնի Աւետման պատկերը, որի մէջ տեղադրւած է մարմարէ խաչքար:

24 Եկեղեցու մասին տե՛ս **Տէր Յովհաննեաց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 200-203:



Ս. Ստեփանոս եկեղեցին հարաւ-արեւմուտքից (լուս.՝ անյայտ հեղինակի, Ի դարի սկիզբ)

Հարաւային դռան ճակատին եղել է Յիսուսի մկրտութեան պատկերը՝ հետեւեալ յիշատակագրութեամբ.

Յիսուս խոնարհեալ առ ծառային եկեալ: Թիվն ՌՃՀԱ (1722):

Հրատ. **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 202: **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 159: Documents of Armenian Architecture, p. 109.

Վերոյիշեալ պատկերն ու գրութիւնը վերջերս՝ նորոգութեան ժամանակ, ծածկել են սւաղով:

Արեւմուտքից 4 հսկայ որմնասիւներ, ցածից դէպի վեր թեքւած, ամրապնդում են պատը եւ այն 3 մասի բաժանելով՝ իրենց մէջ են առնում եկեղեցու գլխաւոր մուտքը:

Որմնասիւներն իրենց բարձրութեան 2/3-ում կամարաձեւ սիւների են փոխւում, պատշգամբներ ստեղծում, որոնց պատճառով էլ եկեղեցին արեւմուտքից երկյարկանի տպաւորութիւն է թողնում:

Հայկական ոճով աղիւսաշէն փոքր զանգակատունն աւելացել է ԺԹ դարում:

Եկեղեցին գմբէթաւոր սրահ է եւ իր մեծութեամբ՝ ներսից տպաւորիչ: Գմբէթը նստած է քառանկիւնի 4 սիւների վրայ, որոնք կամարներով միացած են 8 որմնասիւներին:

Սպիտակեցւած է՝ բացառութեամբ յախճապատւած եւ նկարաձեւ մասերի: Դասի պատերի ներքեւի մասը յախճապալէ ծածկ ունի, իսկ վերին մասը շուրջէշուրջ պատկերների գոտիով է զարդարւած:

Խորանի պատերի, ինչպէս նաեւ սիւների ներքեւի մասերը յախճապալերով են ծածկւած:

Եկեղեցու որմերին մի քանի իւղաներկ պատկերներ կան, որոնցից որոշ մասը 1970-ական թւականներին սխալ ձեւով մաքրելու պատճառով աւերւել է:



Ս. Ստեփանոս եկեղեցին արեւմուտքից (լուս.՝ Ժ. Ոսկանեանի, 1960-ական թթ.)


Խորանի խաչկալը Ստեփանոսի քարկոծումն է պատկերում, որի եզրերին՝ կլոր շրջանակներում, առաքեալների նկարներն են:

Խաչկալի 2 կողմերում Մարիամ Աստւածածնի եւ մանուկ Յիսուսի նկարներն են:


Խորանի 2 կողմերում կան մեծ աւանդատներ, որոնցից հիւսիսայինն ունի մկրտութեան աւազան եւ իր առանձին մուտքը եկեղեցուց դուրս: Յատուկ գեղեցկութիւն ունեն այս եկեղեցու յախճասալերը, որոնք կարելի է 2 մասի բաժանել: Մեծ մասը Իսֆահանում ընդունւած կապոյտ-դեղին ծաղկամոտիւներով է զարդարւած, իսկ միւսները՝ սիւների եւ ժողովրդական մասում եղածները, բաց եւ մուգ կապոյտ զարդամոտիւ ունեցող յախճասալերն են, որոնք բերւել են նախկին Ս. Սարգիս (Օհանայ վանք կոչւող) եկեղեցուց, որը քանդւել է 1850-ական թւականներին:


Եկեղեցու արեւմտեան մասում պատի միջի աստիճանները տանում են դէպի լաւ պահպանւած պատշգամբ կամ կանանց յարկ:

Եկեղեցին, սիւների եւ որմնասիւների ուղղահայեաց գծերին համադրաբար, ունի հորիզոնական բաժանումներ, որոնց աւելանում է սիւներն ու որմնասիւներն իրար միացնող գերանների հորիզոնական շեշտող տպաւորութիւնը:



Համալիրի գլխաւոր յատակագիծը (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը, 2026 թ.)





Եկեղեցու հիւսիսային ճակատը եւ կտրուածքը դէպի հիւսիս (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը, 2026 թ.)

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Գտնւում է Նոր Ջուղայի Չարսու թաղում, իսկ մուտքը բացւում է Չարսուի պողոտայից թեքւող փոքր եւ նեղ փողոցում:

Կառուցւել է 1621 թիւին[25] ժողովրդի նուիրատուութեամբ եւ կոչւել Ս. Աստուածածին: Յետագայում, Ամիրասատենց խոջայ Եղեազարի կողմից Ս. Յովհաննէս Մկրտչի մասունքն այս եկեղեցուն նուիրւելով, անուանափոխւել է՝ կոչւելով Ս. Յովհաննէս Մկրտչի եկեղեցի: Ժողովուրդը կոչել է նաեւ Աջի ժամ:

«Աջ» ունեցող համբավի շնորհիւ այս տեղը դառնում է սիրւած ուխտավայր, ուր հիւանդները յաճախ են երկար ժամանակ բնակւում եւ խցերում իրենց օրը աղօթքով անցկացնում:

Ինչպէս արձանագրութիւններն են վկայում, եւ այսօրւայ շինութեան վիճակն է ցոյց տալիս, յարակից շէնքերը դարերի ընթացքում փոփոխութեան են ենթարկւել, իսկ եկեղեցին էլ բազմիցս նորոգւել է՝ սկսած 1747 թւից մինչեւ 1941-ը եւ դեռ մօտ անցեալը՝ 1978 թւականը:

Նեղ փողոցում բացւող դուռն իր մեծութեամբ եւ գեղեցկութեամբ հմայիչ է: Դռան կողմերում նստատեղիներ կան, իսկ ճակատն ու կամարածածկը աղիւսէ գեղեցիկ զարդաշարեր ունեն, որոնց մէջ տեղադրւած են կապոյտ գոյնի փոքր յախճապակեր, իսկ կենտրոնում՝ սպիտակ եւ կապոյտ գոյների դասաւորութեամբ խաչ:

Փողոցից մուտքը բացւում է պատշգամբում, որի ծածկը նստած է քարէ 2 գեղեցիկ սիւներին, որից մի աստիճան ներքեւ եկեղեցու բակն է:

Բակի արեւելքում են եկեղեցին ու մատուռը, իսկ արեւմուտքում եւ հիւսիսում գտնւող սենեակները գործածւում են որպէս բնակարան, երբեմն էլ՝ պահեստարան: Հիւսիսում երկրորդ յարկի բնակարանի մուտքը դրսից է, իսկ ներքեւի սենեակը ժամանակին գործածւել է որպէս փուռ եւ խոհանոց:

Բակի հարաւային պատի երկայնքով դարասկզբին փոփոխութիւններ են տեղի ունեցել. բակը փոքրացել է, եւ այսօր եկեղեցու դռները բացւում են փոքր պահեստարանների մէջ:

1978 թւին այստեղ կառուցւում է մի սրահ, որն օգտագործւում է հոգեհանգստեան արարողութիւնների ժամանակ, ինչպէս նաեւ՝ որպէս ժողովատեղի:

Բակը խնամւած տպաւորութիւն է թողնում, 2 ածուներում ունի 2 բարդիներ, մի քանի պտղատու ծառեր, ծաղիկներ: Աղիւսէ սալայատակում բազմաթիւ տապանաքարեր կան, որոնցից մէկի վրայ քանդակւած է մի մարդու պատկեր՝ վիզը կտրելիս, որի մօտ մի ձիաւոր է կանգնած: Դժբախտաբար, տապանաքարի թւականն ընթեռնելի չէ:

25 Եկեղեցու մասին տե՛ս **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 204-207:



Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին հիւսիս-արեւմուտքից (լուս.՝ անյայտ հեղինակի, Ի դարի սկիզբ)

Եկեղեցին դրսից քահգելապատ, քառանկիւնի պարզ շէնք է՝ նման Նոր Ջուղայի միւս եկեղեցիներին: Տարբերւում է միայն զանգակատնով, որը միւսների պէս չի աւելացել տանիքի վրայ, այլ կառուցւել է՝ թիկնելով մայր մուտքին՝ համաճայն Հայաստանեաց եկեղեցու աւանդութեան:

Աղիւսէ կառոյց ունեցող զանգակատունը 3 յարկերից է բաղկացած: Առաջին 2 յարկերը քառանկիւնի են, իսկ վերջինը 8 սիւներին նստած գմբէթ է: Զանգակատան երկրորդ յարկի՝ դէպի բակ նայող ճակատների սիւների եւ կամարների միջեւ ընկած եռանկիւնի տարածութիւններն ունեն կապոյտ-դեղին յախճապակէ ծաղկազարդեր:

Պօղոս Անդրէասեանի նուիրատուութեամբ 1841 թիւն կառուցւում է զանգակատունը՝ փոխարինելով մինչ այդ գոյութիւն ունեցող փայտէ կոչնակին, որի զարդաքանդակ արձանագրութիւնը տեղադրւած է եկեղեցու մուտքից արեւմուտք՝ զանգակատան հիւսիսային որմնասիւնին.

Յամի 1841, | կառուցաւ զանգակատունս ար|դեամբ եւ ծախիւք աղայ Պօ|ղոս Անդրէասի ժողովրդականի | սոյն եկեղեցւոյ, որ իր տղայութե(ան) | հասակին գաղթեցաւ ի Ջավա եւ | անդ եղեւ ճոխ կալուածատ(է)ր եւ | վաճառական: | Փորագրեաց Յովհաննէս Կ. Դաւթեանց, ի 1858:

Հրատ. **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 131: Documents of Armenian Architecture, p. 108.

Տարընթերցում. ***Մինասեանի*** *եւ Documents of Armenian Architecture-ում «Յամի 1841» հատուածը բացակայում է (Ր.Ք.):*

Եկեղեցին ունի 2 մուտք հիւսիսում, որոնք բացւում են մատուռի պատշգամբում, 2 մուտք հարաւում, որոնք այսօր տանում են դէպի փոքր պահեստարաններ, եւ արեւմտեան գլխաւոր մուտքը, որն անցնում է զանգակատան տակով եւ շեշտւած է երիզազարդ գեղեցիկ քարերով ու որմնաքանդակներով:





Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու դռան վերեւում գտնուող եւ զանգակատան արձանագրութիւնները (լուս.՝ Ս. Դանիէլեանի, 2019 թ.)

Դռան վրայ կան 3 արձանագրութիւններ, որոնցից ամենահինը վերի մարմարէ քարն է՝ բաժանուած 3 պատկերների. աջ կողմում՝ պատուանդանի վրայ, խաչ եւ Աստծու գառը, ձախում՝ գանգ եւ կաթսայ (հաւանաբար դժոխքի խորհրդանիշը), իսկ կենտրոնում՝ փակագիր արձանագրութիւն՝ խաչակիր ձեռքով եւ օձով պահուած (Աստծու արդարութիւնը), այս բոլորը՝ շրջանակուած արձանագրութեամբ.

Այս է դուռն կենաց եւ ճանապարհ յոյսոյ փրկութեան: | Ձեռն քո արարիհ | եւ ըստեղծիհ զիս ի հողոյ, դարձեալ ձեռամբդ քո կեցոյ ի կոր{ը}սեանս ժամոյ: Թվ(ին) | փոքր ՃԺԴ (1729):

Հրատ. **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 206: **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 130: Documents of Armenian Architecture, p. 108.

Այս գրութեան ցածում՝ դռան զարդակամարի մէջ, քանդակուած են Յովհաննէս Մկրտչի գլխատումն ու ևիրումը Հերովդէսի աղջկան եւ Աստծոյ գառը: Ներքեւում գրուած է.

Մաղթ(ա)ն(օ)ք ս(ր)բ(ոյ)ն Յ(ո)վ(հա)ննո(ւ) տ(է)ր Յ(իսու)ս լեր | պ(ա)հ(ա)պ(ա)ն պ(ա)ր(ո)ն Յ(ո)վ(հա)ննէ(ս) Ք(ա)լ(ա)ք(ա)րիհ եւ | կեն(ա)կցիհ՝ Մ(ա)րմ(ա)րիհ եւ որդւ(ո)յն՝ Զ(ա)ք(ա)րէյիհ: Եղեւ թիհ ՌՃՀԴ (1735) մ(ա)յի(ս) Թ (9):

Հրատ. **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 205: **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 130: Documents of Armenian Architecture, p. 108.

Տարբերթերցում. ***Տէր Յովհաննեանցի*** *եւ* ***Մինասեանի*** *մոտ «Մ(ա)րմ(ա)րիհ»-ի փոխարէն՝ «Մարիամին», «Զ(ա)ք(ա)րէյիհ»-ի փոխարէն՝ «Զաքարիհ»: **Տէր Յովհաննեանցի** մոտ «ՌՃՀԴ մ(ա)յի(ս) Թ»-ի փոխարէն՝ «1180 դամայ 29»: **Մինասեանի** մոտ «Ք(ե)ղ(ա)ք(ա)րիհ»-ի փոխարէն՝ «Քալանթարեան», «ՌՃՀԴ մ(ա)յի(ս) Թ»-ի փոխարէն՝ «դամայ ԻԹ»: Տէր-Յովհաննեանցի եւ Մինասեանի մոտ առկայ են բազմաթիւ տարբերութիւններ, նշել ենք միայն կարեւորները (Ր.Ք.):*

Այս արձանագրութիւնից աւելի ցած կարդում ենք վերջին նորոգութիւնների արձանագրութիւնները.

Վերանորոգութիւն | եկեղեցւոյս և դրանս Յարութեան | կատարեցաւ յամի 1941:

Հրատ. **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 130: Documents of Armenian Architecture, p. 108.


Տարբերթերցում. ***Մինասեանի*** *մոտ «1941»-ի փոխարէն՝ «1841» (Ր.Ք.):*

Մուտքի պատի մէջ տեղադրուած ամենահին արձանագրութեան քարն ինքնին վկայում է զանգակատան յաւելացումը եկեղեցին կառուցելուց յետոյ:

Հակառակ միւսների՝ եկեղեցին քառակուսի է եւ 4 սիւներով 3 հաւասար նաւերի է բաժանւում: Կենտրոնում սիւների շարունակութիւնն անցնում է քառանկիւնի թմբուկին եւ միաձուլւում գմբէթի հետ՝ շեշտելով կենտրոնականութիւնը: Յատկապէս թմբուկի 4 պատերում գտնուող 8 լուսամուտներով է լուսաւորւում եկեղեցին՝ 3-ական լուսամուտ՝ արեւելքում եւ արեւմուտքում, 1-ական լուսամուտ՝ հարաւում եւ հիւսիսում: Խորանի 2 կողմերում համարեայ նոյն մեծութեամբ 2 աւանդատներ կան, որոնք, բացի իրենց դռներից, 1-ական մուտքով միացած են եկեղեցուն:

Ս. Յովհաննէսը, համեմատ միւս եկեղեցիների, ներսից աւելի պարզ է: Բացի ներքեւի սրճագոյնից՝ սպիտակեցուած է, որի վրայ մի քանի տեղ, ինչպէս գմբէթի մասում, ունի գծազարդեր:

Խորանի աստիճանների միջեւ ընկած տարածութիւնը բաժանուած է 7 մասերի՝ իրենց մէջ ունենալով գունազարդ կենաց ծառեր:



Զարդապատկերներ կան խորանի որմնախորշերի շուրջ, իսկ գեղեցկութեամբ շեշտողը սեղանի արձաթագործ աշխատանքն է, ինչպէս նաեւ՝ կտաւէ որակեալ ձեռագործները, 2 փոքր վարագոյրներն ու բեմի շքեղ մայր վարագոյրը:

Կնքաւազանի շուրջ՝ դասի բաժնում, պատերի մէջ տեղադրուած փոքր խաչքարեր կան, որոնք այսօր, դժբախտաբար, ծածկուած են ոսկէգոյն ներկով եւ հիմնականում անընթեռնելի են:

Դարերի ընթացքում, նորոգութիւնների հետ կապուած, արձանագրութիւններից մի քանիսը եկեղեցու սիւներում են տեղադրուած, ուր կարդում ենք 1858 թ.՝ Պօղոս Անդրէասի, 1898-ին եւ 1912-ին՝ Տէր-Ոսկանեանցի նւիրատուութիւնների մանրամասնութիւնները:


Եկեղեցու հիւսիսում է գտնւում մատուռը, որը կառուցել է 1774 թին: Այն միաբսիդանի պարզ եկեղեցի է:


Սեղանի աստիճանները նկարազարդ են, իսկ խաչկալը ներկայացնում է Ս. Աստուածածինը, շուրջը՝ հրեշտակներն ու առաքեալները:

Ս. Յովհաննէս եկեղեցին եւ յարակից շէնքերը, ինչպէս նաեւ բակը խնամուած տպաւորութիւն են թողնում:



Համալիրի գլխաւոր եւ եկեղեցու յատակագծերը (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը, 2026 թ.)





Եկեղեցու հիւսիսային ճակատը եւ կտրուածքը դէպի հիւսիս (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը, 2026 թ.)

Ս. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԵԿԵՂԵՑԻ

Գտնւում է Նոր Ջուղայի Ղարագել (Ղարագեղ) թաղում կամ ըստ տեղում գործածւած անունի՝ Առւագլխում:

Համալիրը 2 մուտք ունի. արեւելեանը բացւում է ծառախիտ եւ ջրառատ առւակով օժտւած Առւագլուխ փողոցում, իսկ արեւմտեանը տանում է խօջայ Աւետիքի կամ Քանանեան դպրոցի փողոցը:

Եկեղեցին կառուցւել է հաւանաբար ժողովրդի նւիրատւութեամբ: Ստոյգ թւականը յայտնի չէ, սակայն պատերին տեղադրւած ԺԷ դարի առաջին կեսին պատկանող խաչքարերն ինքնին վկայում են, որ այդ ժամանակ է աւարտւել կառուցումը[26]:

Եկեղեցու անունը նախ եղել է Ս. Աստւածածնին, սակայն համաձայն տարբեր ձեռագիր յիշատակութիւնների՝ Ս. Նիկողայոսի մասունքը 1779 թւին պատրաստւած Աջում դրւելուց յետոյ փոխադրւել է այստեղ, որից յետոյ եկեղեցին անւանափոխւել է:

Դարերի ընթացքում նորոգւել է, եւ փոփոխւել են շրջափակող մասերը: Վերջին անգամ եկեղեցին նորոգւել է 1988-ին, իսկ հիւսիս-արեւմուտքում գտնւող խցերն ու յարակից մասերը, 1988-ին մասամբ նորոգւելով, ձեւափոխւել են:

Ս. Նիկողայոսն ունի 2 բակ՝ Փոքր եւ Մեծ կամ Գլխաւոր:

Արեւելքից մտնում ենք նախ Փոքր բակը, որտեղից 4 աստիճաններով իջնում ենք արեւելքում գտնւող Ամռան եկեղեցու պատշգամբը, ապա նորից մի աստիճան իջնելով՝ հասնում Մեծ բակին: Այս բակի հարաւում եկեղեցին է:

Արեւմուտքում է գտնւում դէպի Քանանեան փողոց տանող, բակից մի քանի աստիճան բարձր եւ գեղեցիկ աղիւսաշար նախամուտքը, ինչպէս նաեւ՝ ժամկոչի նորոգւած սենեակը:

Մեծ բակի արեւելքում է մատուռը կամ Ամռան եկեղեցին:

Ածուներ կան 2 բակերում, իսկ Մեծ բակում՝ աղիւսէ սալայատակի մէջ, տապանաքարեր են տեղադրւած: Դրանցից մէկը պատկանում է խօջայ Մինասի որդուն՝ խօջայ Էմինազին, որին 1746 թւին Նաղիր շահը, նախանձից դրդւած, կենդանի այրել է տալիս:

Ս. Նիկողայոս եկեղեցին՝ իր քահգելածածկ պատերով եւ պարզ բաժանումներով, նմանւում է Նոր Ջուղայի միւս եկեղեցիներին: Համեմատաբար աւելի փոքր է, բայց իր մեծ գմբէթով եւ արտաքին ճակատի գծերով շեշտում է ուղղահայեացութիւնը:



Ս. Նիկողայոս եկեղեցին արեւմուտքից (լուս.՝ Ժ. Ոսկանեանի, 1960-ական թթ.)

Երկյարկանի փոքր զանգակատունը՝ հայկական ութանկիւն գմբէթով, աւելացել է եկեղեցու կառուցումից յետոյ տանիքին՝ հիւսիս-արեւմուտքում:

Եկեղեցու սրահից 2 դուռ, 1 դուռ էլ կանանց բաժնից շէնքի հիւսիսային մասը միացնում են բակին:

Տասնվեց անկիւն ունեցող թմբուկը նստած է 2 որմնասիւներին եւ խորանի անկիւններին, որտեղից 8 մեծ լուսամուտներով լուսաւորում է եկեղեցին՝ ընդգծելով նրա կենտրոնակաւութիւնը:

Եկեղեցու սրահն ու նախախորանը կամ դասը միատեղւում են գմբէթի տակ, որի մի կողմում կանանց բաժինն է, իսկ արեւելքում՝ 3 աստիճան բարձր, հնգանիստ խորանը:

Խորանի 2 կողմերում աւանդատներն են, որոնցից հիւսիսայինն ունի կնքաւազան՝ շուրջբոլորը խաչքարերով:

Եկեղեցու հարաւում՝ աւանդատան մօտ, կայ փոքր պահեստարան:

Խորանն ու աւանդատները, ինչպէս պահեստարանը, զուրկ են պատուհաններից:

Այսօր եկեղեցին սպիտակով ծեփւած է, միայն որմնասիւների եւ կամարների եզրերը, ինչպէս նաեւ թմբուկի տակի զարդագծերը ներկւած են կապոյտով: Նախկինում եկեղեցու կենտրոնն ու կանանց բաժինը ծածկւած են եղել «Ոչ հմուտ նկարիչի նկարներով», ինչպէս գրում է Տէր Յովհաննեսեանցը: Յետագայում՝ հաւանաբար «նորոգութիւնների» ժամանակ, դրանք թաղւել են սւաղի տակ:

26 Եկեղեցու մասին տե՛ս **Տէր Յովհաննեսեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 207-209:



Ս. Նիկողայոս եկեղեցու՝ 1916 եւ 1955 թթ. նորոգման արձանագրութիւնները եւ նմոյշներ պատերին առկայ 1611, 1635, 1629 եւ 1633 թթ. խաչքարերից (լուս.՝ Ս. Դանիէլեանի, 2019 թ.)

Մարմարէ քարի վրայ 2 արձանագրութիւններ վկայում են վերջին շրջանի նորոգութիւնների մասին.

Սուրբ Նիկողայոս եկեղեցիս նորոգեցաւ | ի հիմանց արդեամբք բարեյիշատակ | Յովսեփայ Պօղոսխանեան(ի) | յամի տեառն 1916:

Հրատ. **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 145: Documents of Armenian Architecture, p. 109.

Միւս արձանագրութիւնը վերաբերում է լոնդոնաբնակ Յովակիմ Յովակիմեանի՝ 1955 թիւն կատարած նորոգութիւններին:

Նիկողայոս եկեղեցում կան թւագրուած մի քանի ձեռագործ աշխատանքներ, որոնք, որպէս կիրառական արուեստի որակեալ նմոյշներ, հարկաւոր է յիշել: Օրինակ՝ եկեղեցու դաջագործ վարագոյրը, որը գործել է 1810 թիւն Մադրասում (Հնդկաստան): Վարագոյրի վրայի պատկերում տեսնում ենք Յիսուսին եւ Մարիամ Աստուածածնին, ինչպէս նաեւ Մեսրոպ Մաշտոցին տառերի գիւտի ժամանակ՝ շուրջն ունենալով առաքեալների եւ մարգարէների 40 նկարները:

Ինչպէս Նոր Ջուղայի մի քանի եկեղեցիներում, այստեղ էլ կայ նոյն ոճին պատկանող պղնձէ խաչվառ ջահ, որը ինքնին գեղեցիկ նմոյշ է: Խաչվառի վրայ կայ հետեւեալ արձանագրութիւնը.

**Յիշատակ է Փանոսի որդի Զաքարին, որ ետ Ղարագէլի Սբ. Աստուածածին եկեղեցում թվն. ՌՔՃԼ (1781): Յիշատակ է Դալաք Սիմոնիս, որ քաշեցի այս խաչվառէս:*

Հրատ. **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 146-147: Documents of Armenian Architecture, p. 109.


Այս յիշատակութիւնը եւս վկայում է, որ նախկինում եկեղեցին կոչւել է Ս. Աստուածածին:

Խորանի սեղանն ունի արծաթապատ, բարձր որակով աշխատուած ծաղիկ-երիզազարդ, իսկ խաչկալը 1919 թիւն նկարուած Յիսուսի յարութեան տեսարանն է:


Բակի արեւելքում է գտնւում Ս. Ստեփանոս մատուռը, որը կառուցւել է 1774 թիւն: Բաղկացած է խորանից եւ 2 կողմերում համեմատաբար մեծ աւանդատներից, որոնք այսօր օգտագործւում են որպէս բնակարան:


Խորանի 2 կողմերի որմերին կան խաչազարդ պատկերներ, որոնց ներքեւում արձանագրուած է մատուռի կառուցման թւականը: Սեղանի աստիճանները նկարազարդ են, ինչպէս նաեւ՝ հին խաչկալը:

Փայտէ 2 սիւներին կռթնած ծածկը մատուռի պատշգամբի երկայնքով պաշտպանում է խորանի փայտէ դուռն արեւից եւ անձրեւից:



Համալիրի գլխաւոր յատակագիծը (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը, 2026 թ.)





Եկեղեցու հիւսիսային ճակատը եւ կտրուածքը դէպի հիւսիս (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը, 2026 թ.)

Ս. ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑԻ

Գտնւում է Նոր Ջուղայի Դաւրէժ թաղում: Շահ Աբասի բռնագաղթից յետոյ մի խումբ թաւրիզահայեր նախ բնակւում են Իսֆահանի Շամսաբադ թաղում եւ կառուցում Ս. Աստուածածին եկեղեցին, ապա 1655-ին տեղափոխւում են Նոր Ջուղա եւ հիմնադրում Դաւրէժ թաղը: 1659 թւին այստեղ կառուցում են նոյնանուն Ս. Աստուածածին եկեղեցին, որը յետագայում, Ս. Մինասի մասունքները ստանալով, անւանափոխւելով կոչւում է Ս. Մինաս եկեղեցի[27]:

Դարերի ընթացքում եկեղեցին բազմիցս փոքր կամ հիմնական նորոգութիւնների է ենթարկւել, ինչպէս՝ 1827 թւին՝ Սամարանգում ապրող Յովսէփ Ամիրեանի մեկենասութեամբ եւ 1853-ին՝ ջաւայաբնակ Մարգար Սուքիասեանի եւ Եղիազար Գ. Գասպարեանի օժանդակութեամբ:

Վերջին մեծ նորոգութիւնը կատարւել է 1909 թւին:

Փողոցի մուտքի վերեւում՝ կապոյտ յախճասալի վրայ, Ս. Մինաս եկեղեցու պատկերն է՝ շրջանակւած գեղեցիկ գրութեամբ:

Եկեղեցում եղած արձանագրութիւնները վկայում են 1691-ի եւ 1909-ի նորոգութիւնների մասին:

Եկեղեցին գտնւում է բակի հիւսիս-արեւելքում, մատուռը՝ արեւելքում, իսկ յարակից մասերը, ինչպէս բնակելի եւ օժանդակ այլ սենեակներ՝ հարաւում եւ արեւմուտքում:

Բակի հիւսիս-արեւելքում տնտեսական բաժնի փոքր բակն է՝ 3 աստիճանով բարձր: Անցեալում այս մասում, որը փողոցից առանձին մուտք ունի, դպրոց է եղել, բայց այսօր վերածւել է ժողովարանի եւ եկեղեցական արարողութիւններից յետոյ՝ ընդունարանի:

Եկեղեցու, մատուռի, ինչպէս նաեւ բնակելի մասի՝ դէպի բակ նայող պատերի արտաքինը միանւագ է, իրար հետ համադրւած: Պատերը, ճարտարարւեստի բարձր հմտութեամբ աղիւսազարդւած են, եւ տանիքի եզրերը՝ յաճախ նոյն շինւածքով՝ աղիւսով ցանկապատւած: Փոքր աղիւսի զարդամոտիւները՝ իրենց տարբերակներով, մանրամասներով, այս ոճի զարգացման գագաթնակէտն են ներկայացնում:

Եկեղեցին գտնւում է բակի հիւսիս-արեւելքում: Քառանկիւն մեծ շէնք է՝ աղիւսէ ծածկով եւ գմբէթով, նաեւ յետագայում աւելացած երկյարկանի փոքր զանգակատնով:

Ունի 4 դռներ, որոնցից 3-ը հարաւում են, իսկ արեւմտեան կամ կանանց բաժնի դուռը բացւում է դէպի կամարածածկ նախասենեակ, որը հարաւից միացած է բակին: Եկեղեցու արեւմտեան դռան վրայի քարին արձանագրւած է.



Ս. Մինաս եկեղեցին հիւսիս-արեւմուտքից (լուս.՝ անյայտ հեղինակի, Ի դարի սկիզբ)

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է դալաք Աբրահամին, դստ(ե)րացն Աս-լո/ւն, Արզուին, Ղարիպին, թվ(ին) ՌՃԼԸ (1689):

Հրատ. **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 120: Documents of Armenian Architecture, p. 107.

Կիսաբաց նախասենեակով շեշտւած հարաւային կենտրոնական դռան վրայ կայ յետեւեալ արձանագրութիւնը.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է դալաք Աբրահամին, որդոցն Ղարիպ-ջ(ա)ն/ին, Ներսէսին, Դիլանչուն, թվ(ին) ՌՃԼՋ (1687):

Հրատ. **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 120: Documents of Armenian Architecture, p. 107.

Եկեղեցին ներսից քառանկիւն մեծ սրահ է: Քառանկիւնի 4 սիւները եւ 8 որմնասիւները բաժանում են ներսի տարածութիւնը եւ կոտրած կամարներով իրար միանում:

Հսկայ 4 սիւների վրայ նստել է մեծ թմբուկը՝ 8 մեծ պատուհաններով, որի վրայ աւելացել է կիսակլոր գմբէթը:

Տպաւորիչ է եկեղեցին իր մեծութեամբ եւ ներքին ճոխութեամբ: Պատերի, սիւների եւ որմնախորշերի վրայ կան գունաւոր բազմաթիւ զարդանկարներ եւ որմնանկարներ, ինչպէս նաեւ յախճասալեր: Դասի բաժնում 1,15-ից 2 մետր բարձրութեամբ եւ խորանում 1,17 մետրի հասնող յախճասալերը ծածկում են պատերը, որոնց կապոյտի վրայ դեղին, սպիտակ, կանաչ, վարդագոյն ծաղկազարդերը շեշտում են Իսֆահանում տիրող Սաֆաւի ոճը:

Խորանի պատերն ու որմնախորշերն ամբողջապէս ծաղկազարդւած են, իսկ ներքեւի մասը՝ յախճասալերով ծածկւած:

Խորանի կիսագմբէթի կամարում Քրիստոսն է՝ շրջապատւած հրեշտակով, առիւծով, ցուլով եւ արծիւով որպէս խորհրդանիշը 4 աւետարանիչների: Որմնանկարի ներքեւում գրւած է.

27 Եկեղեցու մասին տե՛ս **Տէր Յովհաննեաց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 211-217:



Ս. Մինաս եկեղեցու հարաւային եւ արեւմտեան դռների արձանագրութիւնները (լուս.՝ Ր. Քորթոշեանի (ՀՃՈՒ), 2012 թ.)

**Յիշեսցէք ի Քրիստոս զպարոն Ջէյնին եւ զծնողսն՝ զՇմասն եւ Լալին, եւ զհանգուցեալ եղբարսն՝ Հրմզն. եւ Մրբհնէն., եւ միւս եղբարսն այս կենդանի եղեալսըն՝ Աբլահաթն. եւ զԴաւութն. եւ որդիքն՝ Ասախանն, եւ դուստրն՝ Զիբիդէն, եւ կենակիցն՝ Մարիամն, թիւն 1115 (1666):*

Հրատ. **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 205: Documents of Armenian Architecture, p. 107.

Եկեղեցու որմնանկարների մէջ, որոնք Աւետարանից դրւագներ են պատկերում, աչքի է ընկնում Մայր դռան դիմաց՝ հիւսիսային պատի ծաւալուն նկարը, որը ներկայացնում է վերջին դատաստանը, դրախտը եւ դժոխքը: Այս նկարը նման է Սբ. Հովսեփ Արեմաթացի եկեղեցու վերջին դատաստանի նկարին: Հաւանաբար նկարիչը ներշնչւել է նոյն աղբիւրից: Այս պատկերների ներքեւում մի մարդ գրկել է խաչը, որը հաւանաբար խօջայ Աւետիքն է՝ եկեղեցու մեկենասը:

Մատուռի շէնքը գտնւում է բակի արեւելեան մասում: Կառուցւել է հաւանաբար 1713 թւին եւ կոչւել Ս. Աստուածածին: Ծանօթ է նաեւ Ամռան եկեղեցի անունով, եւ միակ ունեցած յիշատակութիւնը խաչկալի վրայ է.


Ա(ստուա)ծ ողորմի Օվագեմին եւ կողակց(ի)ն՝ Նուրմիս(ա)լին, եւ որդոցն՝ Մանուկին եւ Օվանջանին: | Յ(ի)շ(ա)տ(ա)կ է Հէրոմի որդի պ(ա)ռոն Սարգսին եւ կ(ո)ղ(ա)կցին՝ Գուլաղին եւ իւրեանց ծն(ո)ղ(ա)ցն, թվ(ին) ՌՃԿԲ (1713) շ(ա)մս Ի (ապրիլ 9):

Հրատ. **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 121: Documents of Armenian Architecture, p. 107.

Տարբերթերցում. ***Մինասեանի*** *մոտ «Նուրմիս(ա)լին»-ի փոխարէն՝ «Նուրիվալին»: Documents of Armenian Architecture-ում «Նուրմիս(ա)լին»-ի փոխարէն՝ «Նուրվալին» (Ր.Ք.):*


Մատուռի շէնքն արտաքինով 3 մասի է բաժանւում, որոնցից միջին կամ խորանի մասը երկուսից թէ՛ լայն է, թէ՛ բարձր եւ այսպիսով էլ՝ շեշտւած:


Բակից մատուռի արտաքինը՝ աղիւսի շատ գեղեցիկ դասաւորութեամբ, ճոխ է արհեստի եւ ճաշակի բարձր որակի:



Եկեղեցու հարաւային ճակատը (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը, 2026 թ.)







Համալիրի գլխաւոր ու եկեղեցու յատակագծերը եւ կտրուածքը դէպի հիւսիս (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը, 2026 թ.)

Ս. ՆԵՐՍԷՍ ԵԿԵՂԵՑԻ

Գտնւում է Նոր Ջուղայի Քոչեր թաղում, որը կոչւել է նաեւ Գաւառաբաղ: Անցեալում այստեղ մեծ թւով քարտաշներ բնակւելու պատճառով անւանւել է նաեւ Քարտաշների թաղ կամ պարսկերենով՝ «Մահալլէ Սանգթարաշհա»[28]:

Եկեղեցին իր մեկենասի՝ Աւետիք Գիլանեանի անունով նախ կոչւել է Աւետեաց եկեղեցի, բայց յետագայում, երբ Ս. Ներսէս Մեծի մասունքը փոխադրւում է այստեղ, անւանափոխւում է եւ կոչւում Ս. Ներսէս:

Կառուցման ստոյգ թւականը յայտնի չէ: Յիշւած է 1666-ը, սակայն խորանի աջ՝ եկեղեցու դասում գտնւող որմնաքարի վրայ, արձանագրւած է ՌՃԺ (1661): Հաւանական է, որ այդ թւին է աւարտւել եկեղեցու կառուցումը:

Այդ թւականից յետոյ եկեղեցում եւ յարակից շինութիւններում բազմիցս նորոգութիւններ եւ փոփոխութիւններ են կատարւել:

Ս. Ներսէս համալիրի գլխաւոր մուտքն արեւելքից է: Մի երկրորդական մուտք էլ ունի արեւմտեան շրջապարսպի հիւսիսային հատւածից:

Գլխաւոր մուտքը ծածկւած է կիսակլոր կամարով, եւ դռնից վեր զարդարւած է աղիւս-յախճասալի գեղեցիկ համադրութեամբ:

Բակն այսօր համեմատաբար փոքր է: Ժամանակին համալիրն աւելի տարածուն է եղել, սակայն դարերի ընթացքում տարբեր կողմերից անջատւել է եւ փոքրացել:

Եկեղեցին գտնւում է համալիրի հիւսիս-արեւելքում, ժողովասրահը՝ բակից մի քանի աստիճան բարձր՝ արեւելքում, եւ հարաւ-արեւմուտքում՝ ժամկոչի բնակարանը:

Գլխաւոր բակն անցքով միանում է տնտեսական բակին եւ արեւմուտքում գտնւող հարակից սենեակներին: Վերջիններս եւ սրահն իրենց պատուհան-դռներով միանման են, իսկ արտաքինը բաժանւած է համաչափ մասերի, որոնք իրար միանում են տեղին յատուկ կոտրած կամարներով:

Եկեղեցին դրսից քառանկիւնի բարձր շէնք է, պատերը ծածկւած են քահգելով, իսկ դռների շուրջը շեշտելու նպատակով ճերմակեցւած է: Գլխաւոր դուռը զարդարւած է հմտօրէն քանդակւած քարէ կամարով, որտեղ կարդում ենք հետեւեալ արձանագրութիւնը.

Յ(ի)շ(ե)ց(է)ք ի Ք(րիստո)ս ուստա(յ) Շուքու(ր)ն ե(ւ) ի(ւ)րո(յ) կողակից Մարգարիթն, որդիքն՝ Միրզախանն, Սարուխանն, Ասլանն, դստ(եր)քն՝ Ոսկի, Նուրիխանըն: | Դ(ա)ռ-



Ս. Ներսէս եկեղեցին հարաւից (լուս.՝ Ժ. Ոսկանեանի, 1960-ական թթ.)

ծ(եա)լ յ(ի)շ(ե)ց(է)ք ի Ք(րիստո)ս ուստա(յ) Ասլանն, կ(ո)ղ(ա)կ(ի)ցն՝ Վարթխաթունն, որդիքն՝ Յէրապետն, | Կարապետն, Յակոբն, Ուղիղէն, հարսնէրին: Թվ(ին) ՌՃԻ (1671):

Հրատ. **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 210: **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 140: Documents of Armenian Architecture, p. 107.


Տարընթերցում. ***Տէր Յովհաննեանցի*** *մոտ «Մարգարիթն»-ի փոխարէն՝ «Մարգարիտն»: **Մինասեանի** մոտ «Միրզախանն, Սարուխանն, Ասլանն, դստ(եր)քն» հատւածը բացակայում է: Documents of Armenian Architecture-ում «Մարգարիթն»-ի փոխարէն՝ «Մարգարիտն» (Ր.Ք.):*


Եկեղեցին ներսից մեծ սրահ է, որի տարածքը 4 որմնասիւներով 2 մասի է բաժանւում: Միակ գմբէթը նստած է շէնքի կենտրոնում՝ 4 որմնասիւների վրայ:

Ծաւալուն եկեղեցին պարզ կառոյց է, չունի որմնանկարչութիւն եւ պատերին փակցւած յախճասալեր: Առկա են միայն մի քանի յուշատախտակ եւ խաչքարեր:


Ճարտարապետական բնորոշ գծերը եկեղեցին ներսից 2 բարձրութեան են բաժանւում. առաջին կամ ցածի մասը պարզ, իւղաներկւած պատերն ու որմնախորշերն են, իսկ դրան յաջորդող յարկը սկսւում է անկիւնների շեշտւած գծերով եւ աւարտւում կոտրած կամարներով:


28 Եկեղեցու մասին տե՛ս **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 209-211:





Համալիրի գլխաւոր եւ եկեղեցու յատակագծերը (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը, 2026 թ.)





Եկեղեցու հարաւային ճակատը եւ կտրուածքը դէպի հիւսիս (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը, 2026 թ.)

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Գտնւում է Նոր Ջուղայի Փոքր Մէյդան թաղում՝ Հաքիմ Նեզամի պողոտայից թեքւող Շիրխանի փողոցում:

Եկեղեցու կառուցման թւականը, համաձայն տեւալների[29], ինչպէս նաեւ Յովհաննէս աւագ քահանայ Խաչիկեանի Գաւազանագրքի յիշատակութիւնների, 1633-ն է:

Կառուցւել է խօջայ Մինասի ծախսով, որի պատճառով էլ կոչւել է Փոքր Խոջենց ժամ, իսկ Մեծ Խոջենցը եղել է Ս. Գէորգ եկեղեցին, որի կառուցողն էր խօջայ Նազարը:

Ներսից զարդարւած եկեղեցին դարերի ընթացքում բազմիցս նորոգւել է: Համալիրում, ըստ հարկաւորութեան, փոփոխութիւններ են կատարւել: Համաձայն արձանագրութիւնների՝ եկեղեցին շարունակաբար նորոգւել է՝ սկսած 1790 թւից[30]:

Համալիրի երկփեղկանի դուռը շեշտւած է իր վերում ծեփւած պատի մէջ տեղադրւած 3 փոքր խաչքարերով եւ բացւում է կամարածածկ եւ աղիւսապատ երկար միջանցքի մէջ, որը լոյս ստանալու համար ընդհատւում է, ապա նորից շարունակւելով՝ հասնում եկեղեցու բակին:

Եկեղեցին գտնւում է բակի հիւսիս-արեւելքում, երկհարկանի մատուռը՝ արեւելքում, իսկ հարակից բաժինները՝ արեւմուտքում:

Հիւսիս-արեւելքում կայ 2 սրահ, որոնց յատակն ու պատերի ներքեւի մասը կապտագոյն յախճապաղով են ծածկւած: Դրանք առանձին խոհանոցով ծառայում են որպէս ժողովարան: Այս մասում են գտնւում ներքնայարկ պահեստարանները:

Մայր բակին նայող սենեակներում է ապրում ժամկոչի ընտանիքը, իսկ 2 ուրիշ ընտանիքներ տեղաւորւած են արեւմուտքում գտնւող տնտեսական բակի սենեակներում:

2 բակերն իրար միացած են կամարածածկ միջանցքով:

Լաւ խնամւած աղիւսէ սալայատակ ունեցող բակում կան 3 ածուներ, ուր ծաղիկների, թփերի հետ միասին խաղողի որթեր եւ պտղատու ծառեր են աճում:

24 տապանաքարեր տեղադրւած են մատուռի երկայնքով, իսկ 47-ը՝ բակի կենտրոնում եւ եկեղեցու մուտքի շուրջը:

Ամենահին տապանաքարը կրում է 1641 թւականը, իսկ մի ուրիշ տապանաքարի յիշատակագրութիւնն առնչւում է եկեղեցու կառուցման հետ.

**Թվին փոքր ՃԷ (1722) ովդան Ա (հունվար 15): | Այս է տապան դամբարանի | մեծահաւատ կինս այս բարի՝ | Սամբարս, դուստր է Սուքիասի, | կողակից է սա Քեանանին՝ | մեծ որդուն խօջայ Մինասի, | ս(ուր)բ եկեղեցուս չինողի, | խնդրեմ յիշեք, տուք ողորմի:*

Հրատ. **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 106: Documents of Armenian Architecture, p. 108.



Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին հարաւ-արեւմուտքից (լուս.՝ Ժ. Ոսկանեանի, 1960-ական թթ.)

Եկեղեցին դրսից քահգելապատւած քառանկիւն շէնք է՝ աղիւսէ ծածկով եւ արտաքին պարզ բաժանումներով: Հարաւային եւ արեւմտեան ճակատներում մի քանի պատուհաններ են երեւում՝ իրենց փայտէ զարդաձածկերով:

Տեղական ոճով երկյարկանի զանգակատունը՝ յախճապալէ զարդարանքով, աւելացել է եկեղեցու տանիքին՝ հարաւ-արեւմուտքում:

Եկեղեցին արեւմուտքում ունի 1, հարաւում՝ 2 մուտք: Դրանցից մէկը՝ որպէս գլխաւոր մուտք, շեշտւած է սիւներին նստած փայտէ ծածկով եւ դռան 2 կողմերում՝ պատի մէջ տեղադրւած գեղեցիկ արձանագրութիւններով.

Թվ(ին) ՌՃՀԴ (1735) օվդան ԻԷ (փետրվար 10): | Ամենապատուական և երկր|պագելի խաչիտ քո առ(ա)ջ|ի անկեալ եմ ես՝ Դաւիթ մե|ղսամակարդ մեղօք վաղջանե|ալ քահանայս և յուսով ք|ո ըսպասեմ զի ի նորոգութ|եան աւուրն սօվաւ հանդի(ս)պե|ցայց փառաց փեսայիդ:

Հրատ. **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 198-199:

Տէր իմ Յ(հսու)ս, ամէնօրհնեալ երդոր|դութեանդ երկրպագեալ տ(է)ր Յ|արութիւն Յակոբեան լեալ | որպէս ճնճղուկ միայն եղ|եալ յայսմ կենիս հանգիս|տ չգդեալ ի տապանի աստ | անփոփեալ թիւն ԱՃ/ՂԴ (1809) շամս Ե (մարտ 25):

Հրատ. **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 199:

29 **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 98: Յարկ ենք համարում նշել, որ Արմեն Հախնազարեանն իր անտիպ աշխատութեան մէջ յղել է այսպէս՝ «Լեւոն Մինասեանի ուսումնասիրութիւնները»:

30 Եկեղեցու մասին տե՛ս **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 198-199:





Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու հարաւային գլխաւոր մուտքի երկու կողմերի արձանագրութիւնները (լուս՝. Ր. Քորթոշեանի, 2012 թ.)

Եկեղեցին ներսից միաբսիդանի սրահ է, որի արեւմուտքում՝ որպէս երկրորդ յարկ, Ս տառի ձեւով աւելանում է կանանց վերպահուած վերնայարկը:

Լուսաւորւում է՝ ուղղահայեացութիւնը շեշտելով, իր կենտրոնական մասում 4 որմնասիւներին նստած կեղծ գմբէթի կենտրոնից բացուած փոքր ութանկիւն թմբուկից: Որմնասիւները բարձրում բաժանւում, անցնում են կամարների, որոնց վրայ եւ նստած է եկեղեցու ծածկը:

Հնգանիստ խորանը լուսաւորւում է վերում գտնուող ակնատից, իսկ արեւելքում գտնուող խաչաձեւ պատուհանն այսօր փակուած է: Խորանի 2 կողմերում գտնուող աւանդատները երկյարկանի են, որոնց վերի յարկերը զուրկ են աստիճաններից, եւ կարելի է ասել, որ աւելի շատ գաղտնարանի գործառոյթ ունեն:

Այսօր եկեղեցու ներսի գոյները՝ ներքեւի մասը՝ դեղին իւղաներկ, իսկ վերը՝ ճերմակ, բաժանում են նրա տարածքը 2 յարկերի եւ թուլացնում ամբողջականութեան զեղեցկութիւնը:

Եկեղեցին ժամանակին հարուստ է եղել որմնանկարներով, որոնց մեծ մասը «նորոգութիւնների» ժամանակ ծածկել է սւաղով:

Վերջերս խորանի որմնանկարներից 2-ը ազատեցին սւաղից, որոնցից մէկը Աստուածածնի աւետումն էր՝ հետեւեալ արձանագրութեամբ.

Յիշատակ է տ(է)ր Յարութիւնին եւ իւր կողակից Յան(ն)ա(յ)ուն, 175 (1790):

Հրատ. **Տէր Յովհաննեաց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 198: **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 101: Documents of Armenian Architecture, p. 108.

Միւսը Յիսուսի եւ Սուրբ հոգու պատկերն է՝ ներքեւում արձանագրած.

Ջուր մաքրութիւն մեղաց, արիւն հաղորդ[ութեան սրբոյ]:

Հրատ. **Տէր Յովհաննեաց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 198: **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 101: Documents of Armenian Architecture, p. 108.

Գմբէթարդից բացուած փոքր գմբէթի լուսամուտները լուսաւորում են խորանը, որի ականատին կից կլոր շրջանակի մէջ նստած Յիսուս Քրիստոսի պատկերն է՝ թւագրուած ՌՃԻԷ (1678), ինչպէս սեղանի խաչկալը՝ Աստուածածնի պատկերով:

Բակի արեւելքում է գտնւում մատուռը, որը կառուցել է 1714 թւին խօջայ Սինասի թոռան եւ խօջայ Քանանի որդու՝ Թարխանի կողմից: Այն նեղ միջանցքով բաժանւում է եկեղեցուց եւ բաղկացած է խորանի բարձրադիր մասից եւ աջ ու ձախում գտնւող ցածր աւանդատներից, որոնց վերի յարկերն այսօր օգտագործւում են որպէս պահեստարան:

Մատուռի արեւմտեան ճակատը գեղեցիկ է իր աղիւսապատի մանրամասներով եւ հարուստ՝ վանդակահիւս փայտէ դուռ-պատուհաններով:

Անցեալում մատուռի առաջ փայտէ հաստ սիւներին կռթնած ծածկ է եղել, որը 1960-ական թւականներին հանել են: Դա պատճառ է դարձել, որ արեւն ու անձրեւը խիստ վնասեն փայտէ գեղեցիկ պատը: Արտաքինը լաւագոյն նմոյշն է այդ օրերին փայտի եւ աղիւսի համադրուած ճարտարապետութեան զարգացման:

Մատուռի հնգանիստ խորանի պատերը՝ մօտ 1,20 մ բարձրութեամբ, ծաղկազարդ յախճապակիներով են ծածկուած:

Թաղի փոքր գմբէթի լուսամուտները լուսաւորում են մատուռը:


Գմբէթարդի կենտրոնում կայ արձանագիր որմնանկար.

Յիշ(ե)ցէք ի Քրիստոս զշինող *ս(ուր)բ եկ(ե)ղեցւո(յ)ս զպ(ա)ր(ո)ն Թարխ(ա)նն եւ զեղբա(յ)րսն իւր՝ Ավետ(ի)քն եւ Սարհ(ա)տն եւ* ծնօղսն՝ խօջայ Քանանն *եւ Սամբ(ա)րն եւ ք(ե)ռն ի(ւ)ր՝ Բէկումն, Մատլինա եւ Մուրասէ եւ դստ(ե)րս եւ դստերացն* Մարիամ ... յիշեցէք եւ Աստու(ա)ծ ողորմի ասացէք: | Թիվն *ՌՃԿԳ (1714)-ումն:*


Հրատ. **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 199: **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 105: Documents of Armenian Architecture, p. 109.


Տարրնթերցում. ***Մինասեանի*** *մոտ «Մատլիա»-ի փոխարէն՝ «Մալինայ»:*

Ծանոթ. *արձանագրութեան ուղիղ տրուած հատուածները ճշտելու հնարաւորութիւն չի եղել՝ սւաղի շերտի տակ լինելու պատճառով (Ր.Ք.):*



Համալիրի գլխաւոր յատակագիծը (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը, 2026 թ.)





Եկեղեցու հարաւային ճակատը եւ կտրուածքը դէպի հիւսիս (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը, 2026 թ.)

Ս. ԿԱՏԱՐԻՆԷ ԿՈՒՍԱՆԱՑ ԵԿԵՂԵՑԻ

Գտնւում է Չարսու թաղում՝ Ս. Յովհաննէս եկեղեցու հարաւում:

Պատմական Հայաստանի տարածքում դարեր շարունակ հարիւրաւոր վանքեր ստանձնել են ժողովրդի հոգեւոր, կրթական, մշակոյթային, յաճախ նաեւ քաղաքական պարտականութիւնները, սակայն քիչ են եղել կուսանոցները: Հայ գաղթօջախների մէջ՝ հայրենիքից հեռու՝ Նոր Ջուղայում, որպէս կուսանոց, եզակի է Կատարինէ վանքը:

Վանքը կառուցել է 1623 թիւն յայտնի Լազարեան տոհմի նահապետի՝ խօջայ Եղեազարի մեկենասութեամբ[31]:

Դարերի ընթացքում բազմիցս նորոգել է եկեղեցին, աւելացել՝ փոքր զանգակատունը, եւ ըստ օրւայ պահանջի՝ փոփոխութեան ենթարկել շրջափակի կառոյցներն ու խցերը:

1707 թիւն վանքն ունեցել է 33 կոյս, իսկ 1880-ական թւականներին միաբանութեան թիւը պակասել է եւ դարձել 16: Մենաստանի վերջին կոյսը վախճանել է 1954 թիւն:

Կոյսերը ծառայում էին եկեղեցուն եւ իրենց խստակեաց կեանքն անցկացնում աղօթքով, ձեռագործ անելով եւ օգնելով չքաւոր կանանց, որբերին եւ կարօտեալներին:

Փողոցն այսօր եկեղեցու բակից աւելի բարձր է, որտեղից աստիճաններով իջնում ենք բակ: Եկեղեցին գտնւում է բակի կենտրոնում, որը շրջապատւած է վանքապատկան յարակից շէնքերով: Այն մինչեւ Ի դարի վերջը 3 կողմից շրջապատւած էր 33 խցերով, որոնցից այսօր մնում են միայն հիւսիսային մասում 5 խցեր՝ աւելացած վերնայարկով: Բոլոր սենեակներում բնակւում են հայ կարիքաւորներ՝ բացի ներքեւի խցերից մէկից, որը շատ գեղեցիկ որմնանկարներ ունի:

Նոր Ջուղայի առաջին օրիորդաց դպրոցը բացւել է 1858 թիւն այս վանքում, իսկ 1900-ին՝ տեղափոխւել նոյնանուն նորակառոյց մի ուրիշ շէնք: 1907 թիւն վանքի արեւելեան մասում կառուցւում է աղջիկների, ապա տղաների որբանոց-գիշերօթիկը, որի խնամքը աւելի քան կէս դար ստանձնել էր Հայ կանանց բարեգործական միութիւնը:

Այսօր շէնքը ծառայում է որպէս ժողովատուն: Անցեալում վանքի բակի ջրհորը, որն իր սառը ջրով յայտնի է եղել եւ հանրութեան կողմից օգտագործւել, փողոցի լայնացման պատճառով ծածկւել է:

Եկեղեցին, համեմատ Նոր Ջուղայի միւս եկեղեցիների, աւելի փոքր է: Դրսից ուղղանկիւն է: Բարձր պատերը քահգելապատ են, պատուհանների շուրջը՝ ճերմակեցւած, իսկ 2 դռները՝ իրենց զարդարանքով շեշտւած: Եկեղեցին եւ գմբէթն աղիւսէ ծածկ ունեն:



Ս. Կատարինէ վանքի կոյսերը 1881 թ. (գծանկարը՝ Պ. Դյուֆուրի (արտատպ.՝ Dieulafoy J., նշ. աշխ., էջ 215)

Հիւսիսային մուտքի 2 կողմերի շրջանակները գեղեցիկ որմնանկարչութեամբ են ծածկւած: Դռան վերեւում գրւած է.

1882 | նորոգեցաւ | արտաքին շինուածք | սրբոյ տանս | իրովք ծախիւք:

Հրատ. Documents of Armenian Architecture, p. 108.

Արեւմտեան դուռը բացւում է կամարածածկ միայարկ զանգակատան մէջ, որտեղ 2 սիւները կապող գերանից փայտէ կոչնակն է կախւած:

Եկեղեցին ներսից միանաւ գմբէթաւոր սրահ է: 2 որմնասիւներն ու կամարները այն բաժանում են 2՝ մուտքի եւ կենտրոնական մասի, որի վերեւում նստած է գմբէթը: Թմբուկը ութանկիւն է եւ իր մեծ պատուհաններով լուսաւորում է եկեղեցին:

Հնգանիստ խորանը նստած է ականատով լուսաւորւած 2 նեղ աւանդատների մէջ: Խորանի 2 կողմերում խաչքարեր կան, որոնցից մէկի վրայ ընթեռնելի թւականով արձանագրութիւն կայ.

Խ(ա)չս յիշատակ է Ծ|ատո(ւ)րին, թվին ՌՀՁ (1627):


Հրատ. **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 108: Documents of Armenian Architecture, p. 108.

Տարընթերցում. ***Մինասեանի*** *մոտ «Խ(ա)չա»-ի փոխարէն՝ «Խաչքարս» (Ր.Ք.):*


Եկեղեցու որմնանկարներից պիտի յիշել խորանի վերեւում՝ Յիսուսը Մարիամ Աստուածածնի եւ առաքեալների հետ, խորանի 2 կողմերում՝ 2 եպիսկոպոսների պատկերը, ինչպէս նաեւ Յիսուսի ծնունդն ու Յիսուսը Սիմէոն ծերունուն հանդիպելիս:


Եկեղեցին ու յարակից շէնքերը խնամւած տպաւորութիւն են թողնում:

31 Վանքի մասին տե՛ս **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 223-237:



Համալիրի եւ եկեղեցու գլխաւոր յատակագծերը (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը, 2026 թ.)





Եկեղեցու հիւսիսային ճակատը եւ կտրուածքը դէպի հիւսիս (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը, 2026 թ.)

Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ

Գտնւում է Նոր Ջուղայի Երեւան թաղում եւ կառուցւել է ԺԷ դարում ժողովրդի ևիրատւութեամբ[32]:

Մինչեւ 1850-ական թւականները կոչւել է Ս. Ամենափրկիչ, որից յետոյ, երբ Նոր Ջուղայի հնագոյն եկեղեցիներից Ս. Սարգիսը խոնարհւում է, այնտեղ գտնւող Ս. Սարգսի աջը փոխադրւում է այստեղ, եւ եկեղեցին վերանւանւում է Ս. Սարգիս:

Նոր Ջուղայի հնագոյն եկեղեցիներից էր, որը 1850-ական թւականներին, հեռու լինելով, զրկւել էր հաւատացեալներից, ամայացել ու խոնարհւել:

Եկեղեցում գտնւող Ս. Սարգսի աջը, ինչպէս նաեւ սպասքները փոխադրւում են Ս. Ամենափրկիչ, որի պատճառով էլ այն անւանափոխւում է եւ այդ թւականից կոչւում Ս. Սարգիս:

**Թուին ՌՃԺԷ (1668) տուրբ եկեղեցիս քամամեցաւ հռոմայեցւոց ամսոյս 8-ումն եւ Ազարիայ շամս ամսոյ 20-ումն, յիշատակ է մեղաւորիս՝ ուստայ Խէչատուրիս, ուր ծնողացն, ամէն:*

Հրատ. **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 219: **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ151-152: Documents of Armenian Architecture, p. 109.

Դարերի ընթացքում եկեղեցում եւ իր շրջափակի շէնքերում բազմիցս եղել են փոփոխութիւններ եւ նորոգութիւններ, որոնց արձանագրութիւններից մի քանիսը պահպանւել են մինչ օրս: Կան վիմագրեր ԺԷ-ԺԸ դդ.-ից մինչեւ 1924 թւականը: Վերջին նորոգութիւնները կատարւել են 1989 թւականին:

Նեղ փողոցում գտնւող համալիրի արեւմտեան մուտքը ներս ընկած է, գաջով սւաղւած: Երկփեղկանի դուռը նստած է քարէ հաստատուն շրջանակի մէջ, որի անկիւնները քանդակազարդ մանրամասներ ունեն: Մուտքի ճակատին փոքր խաչքար է տեղադրւած, որով շեշտւում է եկեղեցի լինելը:

Փողոցից դուռը բացւում է ութանկիւն նախասենեակի մէջ, որի պատերն ու կիսագմբէթի կամարածածկը աղիւսից են: Նախասենեակի բուն նպատակը փողոցից տեսողութեան արգելափակելն է, ինչպէս ընդունւած էր բնակելի շէնքերում:

Տարածուն բակն աղիւսապատ է, որի մէջ տեղադրւած են քանդակազարդ բարձրորակ բազմաթիւ տապանաքարեր, մանաւանդ՝ մատուռի ամբողջ երկայնքով եւ եկեղեցու մուտքերի շուրջ:

Եկեղեցին գտնւում է բակի հիւսիսարեւելեան մասում, իսկ մատուռը՝ արեւելքում:

Բակի հարաւում եղել են մի շարք սենեակներ եւ համայնքի ժողովասրահը, ուր այսօր խուզեստանցի աղէտեալներն են տեղաւորւած: Արեւմտեան մասում՝ մուտքի կողքի սենեակները ժամկոչի բնակարանն են, եւ դրա շարունակութեամբ, մի աստիճան մայր բակից բարձր, տնտեսական մասն է, ուր կան պահեստարաններ, խցեր, որոնք եւս այսօր օգտագործւում են որպէս չքաւոր ընտանիքների բնակավայր:

Եկեղեցին քառանկիւնի մեծ շէնք է՝ արտաքինով շրջապատին համադրւող, ոչ մեծ գմբէթով եւ հարաւ-արեւմուտքում՝ տանիքի վրայ, երկհարկանի փոքր զանգակատնով:

Այն 3 դռներով միացած է բակին: Գլխաւոր մուտքը գտնւում է հարաւում եւ շեշտւած է յախճասալէ զարդամոտիւներով եւ պատկերներով, ինչպէս նաեւ յետագայում աւելացած նախասենեակով, ուր անցեալում հաւատացեալները նախքան եկեղեցի մտնելն իրենց կօշիկներն էին թողնում:

Դռան վերեւում Ս. Աստւածածնի աւետումն է պատկերւած յախճասալերով, որի ներքեւում՝ նորից յախճասալի վրայ, յիշւած են մեկենասի՝ խօջայ Յուսէփի անունն ու 1705 թւականը:

Եկեղեցին ներսից 4 քառանկիւնի սիւներով 3 մասերի է բաժանւում եւ իր վրայ վերցնում գմբէթը՝ շեշտելով կենտրոնականութիւնը:

Այն ժամանակին հաւանաբար նկարազարդւած է եղել, սակայն այսօր ճերմակեցւած է՝ բացի թմբուկից ու գմբէթից, որոնք ծաղկազարդ որմնանկարներով միաձուլւած են իրար: Խորանի վերեւում պատկերւած են 12 առաքեալները, իսկ հիւսիսային գաւթի ճակատին առկայ են դրվագներ Նոր Կտակարանից: Եկեղեցու զարդարանքներից են նաեւ որմերից կախւած իւղաներկ պատկերները, շրջանակներով շեշտւած յիշատակագրութիւնները, յաճախ ոսկեգոյնով ներկւած խաչքարերը եւ գոյնզգոյն յախճասալերը: Վերջիններս՝ գետնից մօտ 1,10 մ բարձրութեամբ, շրջանցում են հնգանիստ խորանը, դասը եւ մասամբ սիւներն ու եկեղեցու պատերը:

Յատուկ ուշադրութեան են արժանի եկեղեցու յախճասալերը, որոնք կարելի է ընդհանուր գծերով բաժանել 3 մասի: Հնագոյնները բաց կապոյտի վրայ մուգ կապոյտ նախշ ունեցող յախճասալերն են, որոնք գտնւում են մասամբ սիւների շուրջը, մասամբ հիւսիսային պատին: Այս սալերը բերւել են նախկին Ս. Սարգիս եկեղեցուց:

Նախախորանի կամ դասի հիւսիսային պատին երեւում են տարբեր յախճասալեր՝ իրենց բաց եւ մուգ կանաչ գոյներով, ծառ ու ծաղիկով, կենդանիների մոտիւներով: Փիղն ու վագրը, բուսականութիւնը, ինչպէս նաեւ մարդկանց տարազն ու դիմագծերը ցոյց են տալիս, որ այս յախճասալերը նախկին եկեղեցու համար բերւել են Հնդկաստանից եւ յետոյ փոխադրւել այստեղ:

32 **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 149: Տե՛ս նաեւ **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 169-173, 218-223:





Ս. Սարգիս եկեղեցին հարաւ-արեւմուտքից (լուս.՝ անյայտ հեղինակի, Ի դարի սկիզբ) եւ Ս. Ստեփանոս մատուռն արեւմուտքից (լուս.՝ Ժ. Ոսկանեանի, 1960-ական թթ.)

Յախճասալերի երրորդ տեսակը՝ Սաֆաւի շրջանին պատկանող, Նոր Ջուղայում ընդունւած դեղինի եւ ճերմակի վրայ կապոյտ գոյնի զարդամոտիւներն են:

Բակի արեւելեան կողմում գտնւում է 1704 թւին կառուցւած մատուռը կամ Ամռան եկեղեցին՝ Ս. Ստեփանոսը՝ բաղկացած խորանից եւ 2 կողմերում աւելի ցածր աւանդատներից: Մատուռը հիւսիսում փոքր սենեակով բաժանւած է եկեղեցուց:

Բացօթեայ արարողութիւնների ժամանակ բացւում էր մատուռի փայտէ պատը եւ այն օգտագործւում որպէս խորան, իսկ հաւատացեալները հաւաքւում էին բակում:

Ս. Ստեփանոսը թաղի վրայ ունի փոքր, ութանկիւն թմբուկ եւ գմբէթ:


Մատուռի դրսի պատն արտաքինից շարունակութիւնն է յատակագծի բաժանումների: Նա շեշտւում է կոտրած կամարների գծերով եւ աղիւսի մէջ տեղադրւած ու լաւ պահպանւած գոյնզգոյն յախճասալերով:

Մատուռի ճակատին կապոյտի վրայ սպիտակ գրութեամբ պահպանւած են կառուցման արձանագրութիւնները.


Երկնաքանտակ եւ սխրալի եկեղեցուս սրահն յօրինի յանուն սրբոյն ընՍտեփաննոսի է յիշատակ Դիլանչէի՝ տեառն երկուղած բարեպաշտի եւ ծնօղացն՝ Սարգիսին եւ Մար(ի)ամին, եւ կենակ{ի}ցո{ւ}յն՝ Թանգխաթունին, որդոցն իւրեանց դեռաբուսի | Ստեփաննոս, Մար(ի)ամխանում վերաձա(յ)նի, զորս մախթեմք աղերսալի, յորժամ, որ գայ տ(է)րն ամենի դատողական աթոռ նստի արժան առնել յիշատակի ի թուին հազար հարիւրորդի յհսնակ թուով եռ(ե)ակ ամի տ(եառ)ն մեր(յ) Աղէքս(ա)նդրի: | Ա(ստուա)ծ ողորմի գրճօղ տ(է)ր Ոյանին:


Հրատ. **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 223: **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ154-155: Documents of Armenian Architecture, p. 109.

Տարբերթերցում. ***Տէր Յովհաննեանցի*** *մոտ «Դիլանչէի»-ի փոխարէն՝ «դիլանչեցի», «գրճօղ տ(է)ր Ոյանին»-ի փոխարէն՝ «գրող տէր Յովհանին»:* ***Մինասեանի*** *մոտ «գրճօղ տ(է)ր Ոյանին»-ի փոխարէն՝ «գծող տէր Յովհանին»: Documents of Armenian Architecture-ում «Դիլանչէի»-ի փոխարէն՝ «դիլազեցի», «գրճօղ տ(է)ր Ոյանին»-ի փոխարէն՝ «գծող տէր Յովհաննին»:* ***Մինասեանի*** *մոտ «յորժամ, որ գայ տ(է)րն ամենի» հատուածը բացակայում է: Տէր Յովհաննեանցի, Մինասեանի մոտ եւ Documents of Armenian Architecture-ում առկայ են բազմաթիւ տարբերութիւններ, նշել ենք միայն կարեւորները (Ր.Ք.):*



Համալիրի գլխաւոր յատակագիծը (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը, 2026 թ.)





Եկեղեցու հարաւային ճակատը եւ կտրուածքը դէպի հիւսիս (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը, 2026 թ.)

Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ

Գտնւում է Նոր Ջուղայի Փոքր Մէյդան թաղամասում: Կոչւել է նաեւ Խոջենց ժամ մեկենասի՝ խոջայ Նազարի անունով[33]:

1960-ական թւականներին, երբ ընդլայնւում է Հաքիմ-Նէզամ պողոտան, զոհ է գնում եկեղեցու բակի մեծ մասը՝ յարակից շինութիւններով: Այս փողոցն անցեալում հայտնի էր Ղարիբենց, որի պատճառով էլ եկեղեցին յաճախ կոչւում էր Ղարիբենց ժամ:

Գողթանից Իսֆահան բռնագաղթւած ժողովուրդն իր նոր բնակավայրին ընտելանալու միտումով Շահ Աբասի կարգադրութեամբ Էջմիածնից քարեր է բերում, որոնք հիմնաքարերն էին լինելու մի նոր Էջմիածնի: Նպատակադրւած եկեղեցին չի կառուցւում, եւ 15 քարերը բերւում են Ս. Գէորգ, որի համար էլ այս տեղը դառնում է ջուղահայերի սիրւած ուխտավայրը:

Կառուցման ստոյգ թւականը յայտնի չէ, սակայն Հայաստանից բերւած եկեղեցու սեղանի սիւնաքարերի արձանագրութիւնները ենթադրել են տալիս, որ այն կառուցւել է 1611 թւին: Նոր Ջուղայի պատմութեան ընթացքում արհաւիրքների բերմամբ եկեղեցին բազմիցս լքւել է իր համայնքից եւ յետոյ վերականգնւել:

ԺԹ դարի կէսերին անխնամ մնալով՝ նոյնիսկ փլման վտանգի առաջ է կանգնել: Օգնութեան են հասել մեկենասները եւ փրկել աւերւելուց:

Ս. Գէորգ եկեղեցին գտնւում է բակի հարաւ-արեւելքում: Էջմիածնի քարերի ուխտավայրը, ինչպէս նաեւ բնակելի 2 սենեակները գտնւում են արեւելքում, իսկ հիւսիսում կան բնակելի 3 սենեակներ, ուր այսօր արմատախիլ եղած հայ գիւղացիներ են ապրում: Արեւելեան սենեակները ժամանակին Ս. Գէորգի ամառային եկեղեցին կամ մատուռն էին, որոնք վերջին տարիներին փոփոխութեան են ենթարկւել եւ բնակարանի վերածւել: Արտաքին պատին գոյութիւն ունեցող յախճապաղները անգիտութեան պատճառով կա՛մ քանդել են, կա՛մ սւաղի տակ թաղել:

Ս. Գէորգը բարձր պատերով ուղղանկիւն շէնք է եւ իր արտաքին համաչափ բաժանումներով շեշտում է սւաղւած պատերի ուղղահայեացութիւնը: Հայկական ոճով երկհարկանի փոքր զանգակատունը եկեղեցու արեւմուտքում՝ տանիքին, աւելացել է ԺԸ դարում: Ունի 3 դուռ, որոնցից 2-ը հիւսիսում բացւում են դէպի կամարածածկ ուխտավայրը, իսկ 1 դուռ արեւմուտքում նախ տանում է փոքր նախասենեակ եւ յետոյ միանում բակին: Այս դռան վերեւում՝ յախճապաղների վրայ,



Ս. Գէորգ եկեղեցին հիւսիս-արեւմուտքից (լուս.՝ Ժ. Ոսկանեանի, 1960-ական թթ.)

Աստուածածնի աւետումն է նկարւած, որի ներքեւում արձանագրւած է.

Յիշատակ է պատկերս հանգուցեալ առ Ք(ր)իստոս Աղաւէ եւ Ջախաքունին եւ Գուլնաքաքին, թվ(ի)ն ՌՃԿԶ (1717):

Հրատ. **Սինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 95: Documents of Armenian Architecture, p. 109.

Նոյն ձեւով զարդարւած է հիւսիսային դուռն աղիւսէ եւ յախճապաղէ ստալակտիդներով՝ սեւ, սպիտակ, դեղին եւ կանաչ գոյների գեղեցիկ ներդաշնակութեամբ: Այստեղ Յիսուսի ծնունդն է պատկերւած, որի ներքեւում կարդում ենք.

Այս դուռս տեառն է եւ արդարքն մտանեն ընդ սայ: Ով ոք մտանէ, սորայ նկարել տվողն յիշէ: Թվ(ի)ն ՌՃԿԸ (1719) շամս Ա (մարտ 21):

Հրատ. **Քիւրտեան Յ.**, Նոր Ջուղայի (Սպահան) յախճապակիները ե՞րբ շինուած են, «Սիոն», 1972, № 9-10, էջ 364: **Սինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 95: Documents of Armenian Architecture, p. 109.

Եկեղեցին ներսից երկար սրահ է՝ բարձր պատերով եւ 4 մեծ որմնասիւներով, որոնք տարածքը 3 մասերի են բաժանում՝ իրենց վրայ ունենալով ութանկիւն, համեմատաբար փոքր գմբէթներ:

Եկեղեցին մեծ է եւ հին, բայց այսօր պարզ տպաւորութիւն է թողնում: Հաւանաբար անցեալում այստեղ նկարազարդումներ եղել են, սակայն անխնամութեան շրջանին յաջորդել են սխալ նորոգութիւններ, եւ եղածը ծածկել են սւաղով:

Վերջին նորոգութիւնների մաս են կազմում արտաքնապէս մաքուր, բայց էութեամբ խորթ սալաքարերը, որոնցով ծածկ-

33 Եկեղեցու մասին տե՛ս **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 179-190:

ւել է եկեղեցու եւ խորանի յատակը, եւ մօտ 2,5 մ բարձրութեամբ դեղին-կանաչ գոյնով ներկւած պատերը:

Խորանի աստիճանների միջեւ ընկած դասի պատը ծածկւած է յախճասալերով՝ կանաչ, կապոյտ եւ դեղին գոյներով, ծաղկի ու կենաց ծառի մոտիւներով:


Այստեղից մի նեղ անցք տանում է դէպի խորանի ներքեւում գտնւող 2 մութ նկուղներ: Աստիճանները ծածկւած են փոքր խաչքարերով, նաեւ՝ ձախ նկուղի որմնախորշերը: Նկուղների մրոտած պատերն ու մոմի մնացորդները վկայում են, որ այն ժողովրդի կողմից ընդունւած սրբատեղի է:

Եկեղեցու հիւսիսում՝ բակից մի աստիճան բարձր, կիսաբաց սրահը Ս. Գէորգի ուխտավայրն է: Այստեղ են հաւաքւած Էջմիածնից բերւած քարերը, որոնցից ամենամեծի մէջ մի փոսիկ կայ՝ ջրով լցւած, իսկ շուրջը ծածկւած է ուխտաւորների մոմերով:


Վերջին տարիներին, երբ հայութիւնը թողնում է Չարմահալի գիւղերը, 1865 թւին պատկանող որմնաքանդակաւոր քարէ մի տախտակ աւելանում է եղած քարերին:


Շինութեան այս բաժնի, պատերի, սիւների եւ որմնասիւների ներկայ վիճակը խօսուն վկան է եղած փոփոխութիւնների եւ նորոգութիւնների:

Այստեղ, ինչպէս նաեւ բակում բազմաթիւ տապանաքարեր են տեղադրւած, որոնք իրենց գեղեցկութեամբ ուշադրութիւն են գրաւում: Կան նաեւ վրացերենով փորագրւած քարեր, որոնք կարող է բերւած լինեն Նոր Ջուղայի աւերւած այլ եկեղեցիներից:



Համալիրի գլխաւոր յատակագիծը (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը, 2026 թ.)





Եկեղեցու հիւսիսային ճակատը եւ կտրուածքը դէպի հիւսիս (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը, 2026 թ.)

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Գտնւում է Նոր Ջուղայի Մէյդան թաղում՝ Ս. Բեթղեհէմից մի փողոց դէպի հարաւ: Իր մեծ շրջափակով համարւում է քաղաքի յայտնի եկեղեցիներից մէկը[34]:

Այս համալիրի հիւսիս-արեւելքում է գտնւում նաեւ Ս. Յակոբ եկեղեցին:

Այստեղ է եղել նաեւ 1610-ին կառուցած Ս. Ստեփանոսի փոքրիկ մատուռը, որը մի քանի տարի յետոյ ներառել է նորակառոյց Ս. Աստուածածին եկեղեցու մէջ՝ խորանի հարաւում գտնւող աւանդատանը:

Ս. Աստուածածին եկեղեցին կառուցած է եղել համալիրի մէջտեղում, սակայն յետագայում բակն արեւելեան պատով փոքրացել է եւ ստացել այսօրւայ վիճակը:

Դեռ այսօր էլ տարածուն բակը՝ ծառ ու ծաղկի գեղեցիկ ածուներով, 3 կողմից շրջապատում է եկեղեցին:

Բակի 2 մուտքերից գլխաւորը (ճակատին՝ խաչքար) բացւում է հիւսիսից նախ նախամուտքի սենեակ, յետոյ մի աստիճան իջնելով՝ հասնում բակին: Յիշւած նախամուտքի մի կողմում Ս. Յակոբ եկեղեցին է, իսկ միւս կողմում՝ Յարութիւն Աբգարեանի՝ 1840 թուին հիմնադրած դպրոցի շէնքը:

Կրթօջախի գլխաւոր սենեակի պատին՝ սեւ մարմարի վրայ, գրւած է.

**Ով ոք կամի աշակերտել ի սմա, ի բերանոյն հեռի առնէ տառ ՃԱ 184-3:*

Հրատ. **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 69:

Այժմ դպրոցի որոշ սենեակներ օգտագործւում են որպէս ժողովասրահ եւ հոգեհանգստեան արարողութիւնների ընդունարան, իսկ դրա շարունակութեամբ գտնւող սենեակները, նաեւ յետագայում աւելացած վերնահարկը, ինչպէս բակի միւս մասերի սենեակները, գործածւում են որպէս ժամկոչի եւ կարիքաւորների բնակարան:

Եկեղեցուն շրջապատող շինութիւններն աչքի են ընկնում իրենց համաչափ կառոյցով եւ աղիւսէ գեղեցիկ մանրամասներով:

Բակը, սովորութեան համաձայն, աղիւսապատ է, որի մէջ տեղադրւած են բազմաթիւ տապանաքարեր: Եկեղեցու արեւմտեան դռան դիմաց՝ խցերի շարքին, որպէս տապանատեղի, 3 պատշգամբներ կան, ուր եկեղեցին կառուցողի եւ նրա կնոջ տապանաքարերն են գտնւում:

Այս է տապ/ան մահդես/ի Աւետիկին, / որ փոխեցաւ / աշխար(հ) վերին, / թվին ՌՃԸ (1639) / ամի:







Մահտեսի Աւետիքի, Ամամփաշէի եւ Յարութիւնի տապանաքարերը (լուս.՝ Ս. Կարապետեանի (ՅՃՈՒ), 2009 թ.)

Հրատ. **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 197: **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 69: Documents of Armenian Architecture, p. 106.

Տարրնթերցում. ***Տէր Յովհաննեանցի*** *մոտ «Աւետիկին»-ի փոխարէն՝ «Աւետիքին», «ՌՃԸ»-ի փոխարէն՝ «ՌՃՃԸ» (Ր.Ք.):*

Այս է տապան / Ամամփաշէ, / թվ(ի)ն ՌՃԲ (1653):

Հրատ. **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 70: Documents of Armenian Architecture, p. 106.

Տարրնթերցում. ***Մինասեանի*** *մոտ եւ* Documents of Armenian Architecture-ում *«Ամամփաշէ»-ի փոխարէն՝ «Ամփաշէ» (Ր.Ք.):*

Բակում է գտնւում բժիշկ Սինասի՝ աղաւնների կողմից սպանւած որդու տապանաքարը.

Այս է տապան / բժիշկ Մինա/սի որդի Յար/ութիւնին/, որ անմեղ ըս/պանաւ ի ձե/ռն աղուան/ից, թիվն Ռ/ՃՀԱ (1722) նախա / ամսին ԻԴ (հուլիս 12)/-ումն:

Հրատ. **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 70: Documents of Armenian Architecture, p. 106.

Ս. Աստուածածինը կառուցել է 1613 թուին խօջայ Աւետիքի մեկենասութեամբ, որը հաստատւում է եկեղեցու տարբեր արձանագրութիւններում, ինչպէս նաեւ գմբէթի ներսի (թմբուկի վերի մասում) արձանագրութեամբ.

Շնորհօքն Յ(իսուս)ի Ք(րիստոս)ի գերանկար շինեցաւ բարձրագ(ո)յն զարմանալի ս(ուր)բ եկեղեցիս ձեռամբ մահդեսի Աւետիքին, *կարողութ(եամ)բն Ա(ստուծո)յ աւարտ եղեւ յիշատակ իւր հոգոյն եւ ծնողաց իւրոց, նաեւ զհայրն՝* Խօջայ Բաբաքին *եւ մայրն՝ Ոլուխաթունն, եւ կողակիցն՝ Էմէնփաշէն, եւ որդիքն՝ Յակորջանն, Աւդալմսէն, եւ դստերք՝ Եալաֆն, Ղադամղութլու եւ Սոփիէն, եւ եղբայրն՝ Մարգարէն, Յակոբն եւ քուրն՝ Սանամէ, Այնամէն:* Շինեցաւ ի թագաւորութեան Շահ Աբասին, շինեցաւ սուրբ եկեղեցիս հայրապետութեան տէր Դաւթին, թիվն ՌԿԲ (1613):

34 Եկեղեցու մասին տե՛ս **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 191-197:





Ս. Աստուածածին եկեղեցին արեւմուտքից (լուս.՝ անյայտ հեղինակի, Ի դարի սկիզբ) եւ ներքին տեսքը դէպի արեւելք (լուս.՝ Ժ. Ոսկանեանի, 1960-ական թթ.)

Հրատ. **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 191: **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 59-60: Documents of Armenian Architecture, p. 106.

Տարընթերցում. ***Տէր Յովհաննեանցի*** *մոտ «զարմանալի»-ի փոխարէն՝ «նմանաւ»: **Տէր Յովհաննեանցի, Մինասեանի** մոտ եւ Documents of Armenian Architecture-ում «Էմէնփաշէն»-ի փոխարէն՝ «Լիսին Փաշէն», «Այնամէն»-ի փոխարէն՝ «Այնայն»: Հրատարակիչների մոտ առկայ են բազմաթիւ տարբերութիւններ, նշել ենք միայն կարեւորները: Արձանագրութեան՝ ուղիղ տրուած հատուածները հնարաւոր չի եղել ճշտել (Ր.Ք.):*

Որպէս Նոր Ջուղայի նշանաւոր եկեղեցիներից մէկը՝ դարերի ընթացքում նիւրատուների օգնութեամբ յաճախ նորոգուել է եւ ներսից զարդարուել, որոնց վկայագրութիւնների մի մասը պահպանուել է պատերին:

Ս. Աստուածածին եկեղեցին բակից 3 աստիճան բարձր է եւ 3 կողմից շրջապատուած պատշգամբով՝ 20 քարէ միակտոր սիւներով: Սիւներն իրար միացնող կամարները աղիւսաշէն են, որի մէջ տեղադրուած են յախճասալէ զարդամոտիւներ եւ խաչեր:

Պատշգամբը ծածկուած է աւելի լայն ու փոքր-ինչ թեք տանիքով:

Հաւանական է, որ 1913-ին կատարուած նորոգութիւնների ժամանակ յիշուած քարէ սիւները Նոր Ջուղայի մէկ այլ խոնարհուած եկեղեցուց բերուած եւ այստեղ օգտագործուած լինեն:

Պատշգամբի արեւմտեան ճակատին՝ կապոյտ յախճասալի վրայ, սպիտակ տառերով արձանագրուած է.

Նորոգեցաւ եկեղեցիս ծախիւք բարեյիշատակ հանգ(ուցեալ) Յովսեփայ Պօղոսխանեան(ի) յամի 1913:

Հրատ. **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 68: Documents of Armenian Architecture, p. 106.

Եկեղեցին ուղղանկիւն, համաչափ գծերով աղիւսէ մեծ շէնք է, որի վրայ նստած է նոյնպէս մեծ գմբէթը: Մինչեւ 1848 թիւը ունեցել է փայտէ կոչնակ, որից յետոյ տանիքի արեւմուտքում աւելացել է հայկական ոճով երկհարկանի զանգակատունը, եւ այնտեղ կախուել են Բարսեղ Գալստանեանի՝ Հնդկաստանից բերած զանգերը:

Եկեղեցու բարձր կառոյցի կայունութիւնը հաստատուն պահելու նպատակով պատերը դրսից եւ ներսից ունեն որմնասիւներ: 4 մուտքերից գլխաւորը գտնւում է արեւմուտքում եւ շեշտուած է իր մեծութեամբ ու փայտի գեղեցիկ աշխատանքով: Որմնասիւների մէջ՝ ներս ընկած դռան վերեւում, մի պատուհան կայ, որից աւելի բարձր՝ մարմարէ քարի վրայ, որմնագրուած են 1841 թի նորոգութիւնները:

**Յորինեցաւ այս սուրբ եկեղեցի / յանուն Տիրամօր սուրբ Աստուածածնի, / իսկ շինօղ այս տան էր այս մահտեսի / Խօջա Աւետիք Բաբաքեան ասի, / շինեալ արդեամբ նոյն առատաձեռնի / առ ի յիշատակ իւրոցն տոհմի / ի թուին հայոց միոյ հազարի / եւ վաթսուն երկուցն՝ 1613 ի նմին ամի: / Վերանորոգումն սորին կրկնակի / ձեռամբ բարեջան տէր Յովհաննիսի՝ / որդի լինելով սա Գալստանի՝ / նոյն եկեղեցւոյ վիճակաւորի / ի թուին հայոց միոյ հազարի / եւ երկու հարիւր ինսուն՝ 1841 ամի, / զոր նա նորոգեաց գայս եկեղեցի, / տէր բարեսիրաց յաւէտ գթասցի:*

Հրատ. **Տէր Յովհաննեանց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 195: **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 65-66: Documents of Armenian Architecture, p. 106.

Արեւմտեան դռան 2 կողմի սեւեակները Ս. Գէորգ եկեղեցու նման գործածւում են որպէս մոմ վաճառելու տեղ:

Եկեղեցին ներսից 4 որմնասիւներով բաժանւում է 3 մասերի՝ առաջամաս, կենտրոնական մաս եւ դաս ու խորան:

Մուտքի բաժնի հարաւից աստիճանները տանում են վերնայարկ, որը անցեալում՝ տօն օրերին, նորահարսների ու աղջիկների համար էր վերապահուած:

Յիշուած որմնասիւներն իրար միացած են կոտրած կամարներով, իսկ թմբուկն ու գմբէթը նստած են կենտրոնական բաժնում՝ ստեղծելով գերիշխող հանգամանք: Այս մասը շեշտուած է նաեւ հիւսիսային եւ հարաւային դռներով եւ 3-ական պատուհաններով, որտեղից թմբուկի 4 պատուհանների հետ միասին լուսաւորում են եկեղեցին:

Դասի մասն իր չափերով նման է առաջամասին:

Հնգանիստ խորանի 2 կողմերում են գտնւում աւանդատները, որոնք ժամանակին լուսաւորւել են արեւելքից եւ առանձին դռներով միացել դրսին:

Եկեղեցու շրջափակի արեւելեան պատը ժամանակին կիսել է մեծ բակը 2 մասի եւ որմնասիւներով եւ կամարներով եկեղեցուն խարիսխ դարձել, բայց միեւնոյն ժամանակ՝ փակել արեւելեան պատուհանները:

Հարաւային աւանդատան ճարտարապետութիւնը, խորանն ու փոքր գմբէթը եւ ծաղկազարդ որմնանկարների յիշատակագրութիւնը վկայում են, որ այն եղել է Ս. Ստեփանոս մատուռը, որը ներառւել է նորակառոյց եկեղեցու մէջ:

Եկեղեցու պատերը շուրջէշուրջ, 1,35 մ բարձրութեամբ պատւած են ծաղկազարդ, թռչնազարդ գունագեղ յախճապալերով, որոնց կապոյտ, կանաչ եւ դեղին գոյնի պատկերներն արտացոլում են այդ օրերին երկրում տիրող ճաշակը, աւելացրած նաեւ այն ոճային իւրայատկութիւնները, որոնք բերւած էին Մայր հայրենիքից:

Յախճապալերի վերում գտնւող արձանագրութիւնների գոտին սկսւում է հարաւային դռան մօտից՝ 1651 թւով եւ շրջանցելով եկեղեցին՝ հասնում 1941 թի նորոգութիւններին, որի ընթացքում որոշ տեղերում, ինչպէս՝ դռների մօտ, գրութիւնները եղծւել են:

Յախճապալերից վերեւ, յատկապէս կենտրոնական մասի պատերն ամբողջութեամբ նկարազարդւած ու ծաղկազարդւած են, ինչպէս դասի եւ խորանի կամարածածկերից ներքեւ:

Եկեղեցու կենտրոնական բաժնի որմնանկարներից 4 կտոր նկարւել է պաստառի վրայ Գերաք աղա վաճառականի պատւէրով Վենետիկում եւ բերւել Նոր Ջուղա:

Հիւսիսային պատի նկարը Յովհաննէս Մկրտչի գլխատումն է, ուր նկարւած է նաեւ Գերաք աղան՝ վաճառանիշը ձեռքում: Մի ուրիշ տեղ՝ ճիւղերի մէջ՝ մի ձեռքի վրայ, գրւած է *«Գերաք աղա»*:

Հարաւային կողմի նկարում Սիմոն Ծերունին է՝ Յիսուսը գրկում, որի դիմաց Գերաք աղան է՝ մատուցարանը ձեռքին, 2 աղաւնիներով, եւ ծնկաչոք 3 տղաները, որոնց վերեւում գրւած է. *«Որդիդ սուրբ ողորմեա ինձ»:* Դրանից յետոյ՝ թաքնւած ծառերի մէջ, ջուղայեցիների տարազով նրա կնոջ դէմքն է աղօթողի դիրքում:

Արեւելեան կողմի 2 որմնասիւներին իրար նման 2 պատկերներ կան, մարդը՝ նկարւած կենդանի վիճակով եւ մահացած՝ որպէս կմախք, մօտը դրւած խօջայի գլխարկն ու եպիսկոպոսի խոյրը: Այս պատկերները ցոյց են տալիս, որ կեանքը անցաւոր է, եւ բարութիւնն է մնայունը:

Բացի յիշուած պաստառներից՝ պատերը ծածկւած են որմնանկարներով, մեծ մասամբ՝ սրբերի եւ Աւետարանի տեսարաններ, ծաղկազարդ գոտիներ:

Որմնասիւները, կամարների անցնելով, ստեղծում են պանդանթիւներ (առագաստներ), ուր ոսկեգոյնով նկարւած են 4 հրեշտակներ:

Թմբուկը ցածր է եւ բաժանւած 24 մասերի, որոնցից 4-ը պատուհաններն են, իսկ միւսները շրջանակներով բաժանւած են իրարից եւ սրբերի պատկերներով որմնանկարւած:

Գմբէթի կիսակլորը այսօր կապոյտով է ներկւած, որը ոսկեգոյն սլաքներով 12 մասերի է բաժանւում:

Կամարածածկ դասի բաժնում եւս կան լաւ պահպանւած յիշատակագրութիւններ, որոնք վկայում են մեկենասների կատարած նորոգութիւններն ու զարդարանքը: Ամենահին թւագրութիւնը 1666-ին է պատկանում, որին յաջորդում են 1841 եւ 1876 թւերը:

Խորանը դասից 3 աստիճանով բարձր է, յատակը ծածկւած է կապոյտ գեղեցիկ սալերով, պատերը՝ նոյնպէս յախճապալերով՝ մօտ մէկ մետր բարձրութեամբ, որոնք երիզւած են գեղեցիկ արձանագրութեամբ:

Սեղանը նստած է քառանկիւն սեան վրայ, որի 4 կողմերում նվիրատուների արձանագրութիւններն են պահւած:


Հնգանիստ խորանը 3 պատուհաններ ունի եւ կոտրած կամարներով բարձր գմբէթ: Ամենուրէք աչքի են ընկնում այդ շրջանին իւրայատուկ ձեւեր եւ զարդանկարներ:


Խորանի պատերի արձանագրութիւնները վերաբերում են 1652, 1669 եւ 1841 թւերին կատարւած նորոգութիւններին:


Խորանի աստիճանների միջեւ գրւած է.


**Ջմեղաւոր Գալուստն, զծննդսն իւր՝ մահտեսի Ծատուրն, զմայրն՝ Ղադամղութլուն, եղբարքն՝ Թոմասն, Աւետն, Նազարի եղբարքն՝ Փանոսն, Պետրոսն, Սարուկն, քորքն՝ Հռիփսիմէն, կռղակիցն՝ Շուշանն, որդի՝ Վաթանն, Գիլան, Պերսապէն, Կատանէ, Խանփէրմալին, թիվն ՌՃԺԸ (1669):*

Հրատ. **Տէր Յովհաննեաց Յ.**, նշ. աշխ., հ. Բ, էջ 194: **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 62: Documents of Armenian Architecture, p. 107.









Համալիրի գլխաւոր եւ եկեղեցու յատակագծերը, եկեղեցու հարաւային ճակատը եւ կտրուածքը դէպի հիւսիս (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը, 2026 թ.)

Ս. ՅԱԿՈԲ ՄԾԲՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵԿԵՂԵՑԻ

Գտնւում է Ս. Աստւածածնի եկեղեցու շրջափակում՝ բակի հիւսիսարեւմտեան անկիւնում: Համարւում է Հայաստանից գաղթեցւած եւ Նոր Ջուղայում հաստատւած հայերի կառուցած առաջին եկեղեցին:

Մուտքի վերեւում՝ պատին՝ մարմարէ քարի վրայ, յետեւեալ արձանագրութիւնը կայ.

Եկեղեցիս | Ս(ուրբ) Յակովբայ Մծբնայ Հայրապետին | կառուցաւ թ(վին) ՌԾՁ (1607):

Հրատ. **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 125: Documents of Armenian Architecture, p. 102.

Կառուցման թվականից յետոյ եկեղեցին բազմիցս նորոգւել է, երբեմն էլ՝ փոփոխութիւնների ենթարկւել:

Նոր Ջուղայի պատմագիրները Ս. Յակոբ եկեղեցուն յաճախ մատուռի կոչումն են տւել Ս. Աստւածածնի շրջափակում գտնւելու պատճառով:

Եկեղեցին այսօր միաբսիդանի կառոյց է, սակայն ժամանակին խաչաձեւ է եղել: Ըստ երեւոյթին, բակը ուղղանկիւն դարձնելու նպատակով 1843 թւին շինութեան մէջ փոփոխութիւններ են արւել. անջատել են խաչի հարաւային թեւը, ինչպէս եւ հարաւային աւանդատունը:

Բացի գլխաւոր մուտքից՝ ժամանակին հարաւարեւմտեան անկիւնում ունէր բակից միջանցքով եկեղեցուն միացող կանանց մուտքը: Վերջին տարիներին այն փակւել է եւ կարիքաւորների համար վերածւել սենեակի:

Դրսից եկեղեցու՝ փայտի խաչերով եւ աստղերով զարդարւած մուտքի վերեւում կան վերոյիշեալ որմնագրւած քարն ու 2 խաչքարեր՝ պատի մէջ տեղադրւած: Միաստիճան բակից իջնում ենք եւ մտնում եկեղեցի, որը մաքուր եւ խնամւած տպաւորութիւն է թողնում:

Եկեղեցու վերին մասը սպիտակեցւած է, որմնանկարներ չունի եւ մօտ մի մետր բարձրութեամբ սրճագոյնով է ներկւած:

Որպէս Նոր Ջուղայի հնագոյն եկեղեցի՝ գործածւել է աւանդական կիսակլոր կամարը, այլ ոչ թէ յետագայում կառուցւած եկեղեցիների կոտրած կամարները: Որմնասիւների՝ դէպի ծածկ տանող գծերը շեշտւած են կապոյտ գոյնով: Ներսի պատերին կան մանր ու գեղեցիկ որմնաքանդակներով 35 փոքր խաչքարեր, որոնց չափերը 10-15-ից մինչ 40-50 սանտիմետր են:

Խաչքարերից ամենահինը կրում է ՌԾՁ (1607) թւականը, որը գտնւում է խորանում՝ սեղանի յետեւի պատին:

Բացի խաչքարերի արձանագրութիւններից՝ կան նաեւ երկուսը, որոնցից մէկը խորանի առջեւ՝ քարի վրայ է, իսկ միւսը՝ եկեղեցու հիւսիսային խաչաթեւ արեւելեան պատին՝ մետաղի վրայ:

Առաջինն է.

**Որք հանդիպիք յայսմ տեղւին, եւ տուք ողորմի լուսահոգւին, որ հանգուցեալ էի մէջ ծովին, տապանս է Իւրէնց Սարգսին, թվ. ՌԾՁ (1731):*

Հրատ. **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 126: Documents of Armenian Architecture, p. 102.

Երկրորդն է.

Եկեղեցիս | ս(ր)բ(ո)յն Յակովբայ | Մծբնայ Հայրապետի կա|ռուցաւ ի 1606-7 ամի տ(եառն)ս: | Վերստին | նորոգեալ եղեւ տըր|ովք բարեպաշտաց | ի 1890 ամի | ի հայրապետութե(ա)ն տ(էր) տ(էր) Մակարայ | սրբազնագոյն կաթուղիկոսի | յառաջնորդութե(ա)ն Ամե|նապրկչե(ա)ն ս(ուր)ք վան|ց տ(էր) Եսայեայ սրբազ|ան արքեպիսկոպոսի: | Քանդակեալ եւ նուիրեալ ի պ(ա)ր(ո)ն | Խաչկէ Վ.Գ Աբգարեանց | առ վերոյ յիշեալ սուրբ | եկեղեցին:

Հրատ. **Մինասեան Լ.**, նշ. աշխ., էջ 126: Documents of Armenian Architecture, p. 102.

Քարածածկ խորանն ուղղանկիւն է, աջ ու ձախում պատուհան ունի, որոնցից հիւսիսայինը դէպի աւանդատուն է բացւում, իսկ հարաւայինը՝ այսօր դէպի բակը:


Հիւսիսային աւանդատունը եկեղեցուց մի աստիճան բարձր է, առաստաղը՝ մօտաւորապէս կիսակլոր, եւ յատակն էլ՝ աղիւսապատ: Այստեղ է գտնւում եկեղեցու կնքաւազանը:


Եկեղեցին ունի 3 փոքր գմբէթ, որոնցից համեմատաբար ամենամեծը՝ իր ութանկիւն թմբուկով, գտնւում է կենտրոնում՝ սրահում:


Ս. Յակոբն այսօր զուրկ է արեւելեան եւ արեւմտեան աւանդական պատուհաններից եւ լուսաւորւում է միայն գմբէթներից:

Եկեղեցու ներսում՝ ձախ թեւի խաչամասում, իւղաներկով նկարւած է Յիսուսի մկրտութիւնը Յորդանան գետում: Այս ծաւալուն նկարը պատկանում է Նոր Ջուղայի դպրոցի վաղ շրջանին՝ հաւանաբար ԺԷ դարի կեսերին:

1891 թւին եկեղեցու նորոգման առիթով մի ուրիշ իւղաներկ աւելացել է խորանում:







Եկեղեցու յատակագիծը, հարաւային ճակատը եւ կտրուածքը դէպի հիւսիս (չափ.՝ Ա. Հախնազարեանի, 1980-ական թթ., հրատարակութեան պատրաստեց Ա. Յակոբեանը, 2026 թ.)

ԱՐՄԷՆ ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆ

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ


Հրատարակության պատրաստումը և գիտական խմբագրումը
Րաֆֆի Քորթոշյանի, Էմմա Աբրահամյանի


Խմբագիր, սրբագրիչ
Հասմիկ Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորողներ
Արմեն Գևորգյան, Լիանա Հովհաննիսյան-Քորթոշյան

Նախահրատարակչական աշխատանքները կատարվել են
«Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկության,
Հ. Հովնանյան ընտանեկան հիմնադրամի և
ՀՃՈՒ-ԱՄՆ-ի աջակցությամբ

Տպագրական աշխատանքները կատարվել են
ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ





ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ISBN 978-9939-843-74-2
9 789939 843742

